



ISSN 1829-4219

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 92 2016



- ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ
- ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ԴԵՄՊԱՆ ՌԻԶԱՐԴ ՄԻԼՍԻՆ
- ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
- ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱԽԱՂԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 92 2016

ՀՀ ԳՐԱՏԱԽԱՂԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

Էմիլ Բաբայան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան ՀՀ գլխավոր դատախազի օգնական, Խ.Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ, (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Մհեր Հակոբյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝ 08.04.2016թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ», 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՀՀ գլխավոր դատախազի ուղերձը մարտի 8-ի՝ կանանց միջազգային տոնի առթիվ 3

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը մասնակցել է կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով քննարկմանը 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Գ. Կոստանյանը մեկնել է Ստրասբուրգ..... 5

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսին 5

Հանդիպում ՀՀ գլխավոր դատախազությունում 6

Հանդիպում ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի ներկայացուցիչների հետ 7

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հրայր Թովմասյան Կառավարման ձևի ինստիտուտի ուսումնասիրության անհրաժեշտությունը, կառավարման ձևի սահմանման հիմքերը 8

Սոսի Ալեքսանյան Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերն ու կարգը 12

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սամվել Յուզբաշյան, Գևորգ Խաչատրյան Զինծառայողի կողմից մոլեխաղեր կազմակերպելու կամ դրանց մասնակցելու քրեաիրավական բնութագրի որոշ հիմնախնդիրներ 18

Лусине Варданян Актуальные правовые проблемы постмортального донорства 23

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայկ Երեմյան Քրեական դատավարությունում ապացույցների դասակարգման որոշ հարցեր (իրավահամեմատական վերլուծություն) 31

Գևորգ Խաչատրյան Դատախազի մասնակցությունը քննչական գործողություններին դատախազական հսկողության (գործառույթի) համատեքստում 40

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պարզև Սարոյան Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքը և պայմանները 47

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարինե Պետրոսյան Հեղինակային իրավունքի միջազգային իրավական պաշտպանությունը 55

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 59

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 68

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՈՒՂԵՐԶԸ ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՉ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Միրելի՛ կանայք,

Մրցանց և սիրով շնորհավորում եմ Ձեզ գարնանային տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ:

Այս տոներ ևս մի գեղեցիկ առիթ է՝ արտահայտելու մեր սերն ու հիացմունքը, մեր հարգանքն ու երախտագիտությունը մեր մայրերի, կանանց, քույրերի, դուստրերի և գործընկերուհիների հանդեպ:

Հարգելի՛ կանայք, անգնահատելի է Ձեր դերը ինչպես սերունդների հայեցի դաստիարակության, այնպես էլ իրավակարգի ամրապնդման գործում:

Թող սերը, առողջությունը, երջանկությունն ու ընտանեկան ջերմությունը միշտ ուղեկցեն Ձեզ:

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՏԵՂԱԿԱԸ ՄԱՍՆԱԿՅԵԼ Է ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ



ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը մասնակցել է «Ազգային և միջազգային ջանքերը կիրառական էթիկայի ոլորտում» թեմայով խորհրդաժողովին:

Միջոցառմանը քննարկվել է հանրային ոլորտում բարեվարքության խթանման միջազգային փորձը, ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները:

Բարձրաստիճան պաշտոնյաների էթիկայի հանձնաժողովի կողմից ներկայացվել է կառուցիչ ռազմավարությունը՝ առաջիկայում նախատեսվող ծրագրերը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը՝ ներկայացնելով կոռուպցիոն դեպքերի բացահայտման ուղղությամբ դատախազության կողմից կատարված աշխատանքը, իր ելույթում նշել է, որ կոռուպցիայի դեմ պայքարը եղել և շարունակում է մնալ դատախազության գործունեության առաջնահերթություններից:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 92 2016

**«Ազգային և միջազգային ջանքերը կիրառական էթիկայի ոլորտում» թեմայով
խորհրդաժողովին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Ա. Հարությունյանի ելույթը**

Հարգելի գործընկերներ,

Նախ թույլ տվեք շնորհակալություն հայտնել խորհրդաժողովին մասնակցելու հրավերի համար: Մեր կարծիքով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկային առնչվող հարցերի քննարկմանը նվիրված նման խորհրդաժողովները չափազանց կարևոր են, քանի որ նման քննարկումների միջոցով է, որ հնարավոր է լինում վեր հանել պաշտոնատար անձանց էթիկային վերաբերող խնդիրներ, որոնք առաջին հայացքից կարող են տեսանելի չլինել, կամ չկարևորվել, սակայն իրականում դրանք ունենում են լուրջ բացասական ազդեցություն մեր երկրում արդարության, ժողովրդավարության ազատ տնտեսական մրցակցության և երկրի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող այլ ոլորտների վրա: Կարող եմ միանշանակ փաստել, որ Հայաստանի Հանրապետության դատախազությունն իր աշխատանքում առաջնորդվում է այն համոզմամբ, որ արդարությունը, օրինականությունը և օրենքի առաջ բոլորի հավասարությունն այն հիմնարար սկզբունքներն են, որոնց անզիջում և հետևողական պահպանումն է ապահովելու երկրի կայունությունն ու հզորությունը: Բոլորի հավասարությունը օրենքի առաջ ասելով մենք նկատի ունենք բոլորի առանց բացառությունների, անկախ այս կամ այն անձի զբաղեցրած պաշտոնից, կապերից և ունեցած ֆինանսական հնարավորություններից: Մեր գործընկերներից նրանք, ովքեր հետաքրքրվում են վերջին մի քանի տարիներին դատախազությունում իրականացվող բարեփոխումների ընթացքով, կփաստեն, որ այս ուղղությամբ կատարվել է շոշափելի աշխատանք: Օրինակ, կոռուպցիոն հանցագործությունների մասով կարող եմ տեղեկացնել, որ վերջին տարիներին քրեական գործեր են հարուցվել 1 դատավորի, 1 դատախազի, 10 քննիչի, 10 ոստիկանության աշխատակցի նկատմամբ: Ի դեպ՝

մեկ տասնյակից ավել անձ քրեական պատասխանատվության է ենթարկվել այն բանի համար, որ քաղաքացիներից գումարներ են պահանջել՝ իբրև թե դատախազներին փոխանցելու համար, ընդ որում, այդ անձանց մի մասը քննիչներ են եղել: Պետք է ասեմ, որ նշվածներիցս վերջին գրեթե բոլոր դեպքերով քրեական գործերը հարուցվել են դատախազության ձեռքբերած տեղեկությունների հիման վրա՝ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում: Չնայած նշածս արդյունքներին՝ դատախազության համակարգում մենք վստահ ենք, որ կոռուպցիայի դեմ միայն համակարգված պայքարը կարող է զգալի արդյունքներ տալ: Անվիճելի է, որ միայն իրավապահ մարմինների ջանքերով անհնարին է արդյունավետ պայքար տանել կոռուպցիայի դեմ, եթե հասարակության բոլոր շերտերում առկա չլինի անհանդուրժողականություն նման ցանկացած դրսևորման նկատմամբ: Սակայն, դրա հետ մեկտեղ, առանձին վերցված մեկ պետության ներսում նշածս համակարգված պայքարն էլ դեռ չի երաշխավորում շոշափելի արդյունքների գրանցում, եթե այդ պայքարի համար մենք զինված չենք մեր տարբեր գործընկերների՝ այդ գործում հաջողված փորձի վերաբերյալ ամենաթարմ գիտելիքներով: Այս մոտեցումը հաշվի առնելով՝ մենք չափազանց կարևորում ենք նման խորհրդաժողովները, նման քննարկումները, քանի որ դրանք այս կարևորագույն ոլորտում հաջողության հասնելու անզնահատելի փորձ և գիտելիքներ փոխանցելու գերազանց հնարավորություն են հանդիսանում: Թույլ տվեք դատախազության անունից ևս մեկ անգամ ողջունել քննարկման բոլոր մասնակիցներին և մաղթել մեզ բոլորիս արդյունավետ աշխատանք: Շնորհակալություն»:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 92 2016

Գ.ԿՈՍՏԱՆՅԱՆԸ ՄԵԿՆԵԼ Է ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՀՀ գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Գ. Կոստանյանի գլխավորած պատվիրակությունը հունվարի 25-ից 30-ը աշխատանքային այցով մեկնել է Ստրասբուրգ:

Այցի շրջանակներում Գ. Կոստանյանը Ստրասբուրգում հանդիպումներ է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Գուիդո Ռայմոնդի (Guido Raimondi),

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուիժնիեկսի (Nils Muižnieks), Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջաննի Բուքիկիոյի (Gianni Buquicchio), Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Տորբյորն Յագլանդի (Thorbjørn Jagland) հետ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Գ.Ռայմոնդին պարզևատրվել է հուշանվերով (անմոռուկ):

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԼՒՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄՆ ԴԵՄՊԱՆ ՌԻԶԱՐԳ ՄԻԼՍԻՆ



«Կոռուպցիայի դեմ պայքարում ԱՄՆ կառավարությունը ուրախ է համագործակցել ՀՀ գլխավոր դատախազության հետ», - այս մասին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը նշել է ՀՀ գլխավոր դատախազի հետ հանդիպմանը, որին մասնակցել են նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանը, ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի հակակոռուպցիոն հարցերով ավագ փաստաբան Փիթեր Այզենֆորթը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մշտական իրավական խորհրդատու Ջոն Լուվեջյանը, ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի իրավաբան-փորձագետ Քրիստինա Աֆոյանը:

ՀՀ գլխավոր դատախազը ողջունելով կոռուպցիոն թեմայով արդյունավետ և կառուցողական հանդիպումների կազմակերպումը, նշել է, որ կոռուպցիայի դեմ պայքարը եղել և մնում է դատախազության գործունեության առաջնահերթություններից: Գ. Կոստանյանը կարևորել է փորձի փոխանակումը, ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական առումով՝ հաշվի առնելով ՀՀ-ի և ԱՄՆ-ի օրենսդրությունների առանձնահատկությունները:

Հանդիպմանը քննարկվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ընթացակարգերին վերաբերող հարցեր: ՀՀ գլխավոր



դատախազը նշել է այն առաջնահերթությունները, որոնք առավել նպատակահարմար կլինի

քննարկել դատախազների և քննիչների մասնակցությամբ ԱՄՆ դեսպանատան կողմից կազմակերպվելիք աշխատանքային քննարկմանը:

«Այնպիսի փորձագետների այցելությունները, ինչպիսիք են ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի հակակոռուպցիոն հարցերով ավագ փաստաբան Փիթեր Այզենֆորթը, թույլ կտան մտքեր փոխանակել այն մասին, թե ինչպես է հնարավոր համատեղ լուծումներ տալ այդ լրջագույն խնդրին», - նշել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպան Ռ. Միլսը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է երկկողմ համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՂԵՏԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանն ընդունել է արդարադատության ոլորտի ուսումնասիրության համար Հայաստանում գտնվող «Արդարադատության մոնիտորինգ» ծրագրի փորձագետներին: Ծրագրի տնօրեն Վ. Գրոմյուկը և խմբի ղեկավար Է. Սվանիձեն ներկայացրել են փետրվարին մեկնարկած ծրագրի հիմնական նպատակներն ու անելիքները: «Արդարադատության մոնիտորինգ» ծրագիրը Հայաստանում արդարադատության ոլորտի ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքները կշարունակի մինչև 2018թ.-ը:

Հանդիպմանը քննարկվել է ծրագրի շրջանակում համագործակցությունը ՀՀ արդարադատության համակարգի, այդ թվում՝ ՀՀ դատախազության հետ: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը ողջունել է մոնիտորինգային խմբի աշխատանքը՝ բարձր գնահատելով արդյունավետ համագործակցության հնարավորությունը: Ծրագրի տնօրեն Վ. Գրոմյուկի խոսքով, «Արդարադատության մոնիտորինգ» ծրագրի ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված առաջարկությունների փաթեթը օգտակար կլինի արդարադատության ոլորտում բարեփոխումների շարունակական ընթացքն ապահովելու համար:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը նշել է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը պատրաստ է իր լիազորությունների շրջանակում աջակցել երկամյա ծրագրի իրականացմանը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Արդարադատության մոնիտորինգ» ծրագրի արդյունքներն ամփոփել համատեղ քննարկման միջոցով:

● ՕՐԻՆԱԿԱՆԱՍԻՑՈՒՄ № 92 2016

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՄՐԱՄԻՋՈՅՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ (ԹՊԻՀ) ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԵՏ



ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի պլանավորած Հայաստանում իրավունքի գերակայության և արդարադատության ոլորտում իրականացվող օժանդակության ծրագրերի կարիքների գնահատման խմբին: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ քրեական արդարադատության ոլորտի զարգացումները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Է. Բաբայանը կարևորել է համագործակցությունը, փորձի փոխանակումն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ քննարկումները, ընդգծելով, որ կոռուպցիայի դեմ պայքարը շարունակում է մնալ Գլխավոր դատախազության գործունեության առաջնահերթություններից: Գլխավոր դատախազի տեղա-

կալը, հիշեցնելով ՀՀ Նախագահի փետրվարի 12-ի ելույթը, որի ընթացքում երկրի ղեկավարը կարևորել է կոռուպցիայի դեմ շարունակական պայքարը, ընդգծել է, որ այդ առումով չափազանց կարևոր է միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի գործիքակազմի համալրումը:

ԱՄՆ պետքարտուղարության գնահատման խմբի անդամներ Զ. Կուրոդան և Ռ. Մանսուրին պատրաստակամություն են հայտնել աջակցել փորձի փոխանակման ծրագրերի իրականացմանը: Քննարկվել է նաև ՀՀ և ԱՄՆ արդարադատության համակարգի տարբեր կառույցների հետ համատեղ աշխատանքի, համագործակցության ռազմավարության մշակմանն առնչվող, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:



ՀՐԱՅՐ ԹՈՎԱՍԱՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար - գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Այսօր սահմանադրական իրավունքի գիտության ու քաղաքագիտության ոլորտներում առանցքային նշանակություն ունեն կառավարման ձևին նվիրված ուսումնասիրությունները: Այդ ուսումնասիրությունները ելակետային են թե՛ սահմանադրական իրավունքի, թե՛ քաղաքագիտության տարբեր ինստիտուտների համար: Այն հանգամանքը, որ կառավարման ձևը նաև քաղաքագիտության ուսումնասիրության առարկա է, արդեն իսկ խոսում է վերջինիս ինչպես կարևորության, այնպես էլ բարդության մասին:

Կառավարման ձևը՝ որպես պետության կառավարման համակարգի մաս, բոլոր ժամանակներում գտնվել է քաղաքագետների ու իրավաբանների հետաքրքրության կենտրոնում: Դեռ ոչ վաղ անցյալում պետության կառավարման ձևի փոփոխության համար պայքարն արյունալի բախումների պատճառ է դարձել: Անցյալում դրան վճռորոշ նշանակություն է տրվել, հեղափոխական ընտրություն է ընթացել միապետությունների ու հանրապետությունների միջև: Այդ պայքարը պատահական ու ինքնապատակ չի եղել: Այն պայքարը մեծ հաշվով պայքար չի եղել հանուն այն բանի, թե ինչպես կձևավորվի պետական իշխանությունը, կիրականացվի դա միանձնյա, թե կոլեկտիվ, այն կլինի մեկ անձի, փոքրամասնության, թե մեծամասնության իշխանություն: Դա պայքար էր մարդու իրավունքների, կայունության, անվտանգության ու ժողովրդավարության համար:

Այդ ժամանակահատվածում պետության ժողովրդավարության մակարդակը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ծավալը, բովանդակությունն ուղղակիորեն փոխկապակցված էին, պայմանավորված կառավարման այս ձևերի հետ: Ժամանակակից հանրապետական և միապետական կառավարման ձևերի վերլուծությունը իրավամբ վկայում

է, որ կառավարման այս կամ այն ձևի ընտրությունը չունի այն վճռորոշ նշանակությունը, ինչ դարեր առաջ, սակայն դրանով հանդերձ այս ինստիտուտի նկատմամբ իրավաբանների և քաղաքագետների հետաքրքրությունը չի մարում: Այն, որ ժամանակակից հանրապետություններն ու միապետություններն իրենց բովանդակությամբ այլևս 200 կամ անգամ 100 տարի առաջվա հանրապետություններն ու միապետությունները չեն, միանշանակ է, և պնդումը, որ կառավարման հանրապետական ձևն առավել ժողովրդավարական է, որ կառավարման հանրապետական ձև ունեցող պետություններում մարդու իրավունքներն ավելի լայն են ու ավելի պաշտպանված, այսօր այլևս արդիական չէ: Նման հետևություն անելու հիմք է տարբեր կառավարման ձև ունեցող երկրների կառավարման ձևի բովանդակության վերլուծությունը: Քաղաքական համակարգերն Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի կամ Հայաստանի Հանրապետություններում և Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի, Դանիայի, Նորվեգիայի կամ Ճապոնիայի միապետություններում, սկզբունքորեն տարբերություններ չունեն: Միևնույն ժամանակ ժողովրդավարությունն ու կառավարման արդյունավետությունը հանրապետական կառավարման ձև ունեցող որոշ երկրներում անհամեմատ ցածր է, քան միապետականներում: Համեմատենք, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի, Դանիայի, Նորվեգիայի, Բելգիայի, Ճապոնիայի միապետությունները և Աֆղանստանի, Իրաքի, Եգիպտոսի, Պակիստանի, Նեպալի, ԿԺԴ-ի հանրապետությունները: Ակնհայտ է, որ թե՛ ժողովրդավարության, թե՛ մարդու իրավունքների առումով առաջին խումբ երկրներն առաջ են երկրորդ խմբում գտնվող երկրներից: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, այս համեմատությունը բնավ էլ չի նշանակում, որ կառավարման ձևի հարցն այլևս գործնա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 92 2016

կան նշանակություն չունի: Կառավարման ձևի հարցը գործնական նշանակություն ունի ոչ միայն զարգացող երկրների համար: Նրա դերը չպետք է արհեստականորեն փոքրացնել՝ երբեմն ժխտելով նշված տարբերակման որևէ արժեք¹:

Կառավարման ձևի ընտրության հարցն այսօր էլ իր սրությամբ կանգնած է ժամանակակից մի շարք երկրների առջև: Եթե կառավարման միապետական ձևը փոխելը չի քննարկվում, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, Դանիայում, Ճապոնիայում, իսկ կառավարման հանրապետական ձևը՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, ապա հանրապետական կառավարման այս կամ այն ձևի ընտրությունը վիճահարույց է հատկապես նորանկախ պետությունների համար, որոնք կառավարման այս կամ այն ձևի պատմականորեն ձևավորված հիմքեր չունեն:

Հետխորհրդային գիտական գրականության մեջ ըստ էության գոյություն չունի համաձայնություն ինչպես «կառավարման ձևի» սահմանման, այնպես էլ դրանց դասակարգման վերաբերյալ: Սովորաբար դա բնորոշում է պետական իշխանության բարձրագույն մարմինների՝ պետության գլխի, խորհրդարանի, կառավարության ձևավորման կարգը և նրանց փոխհարաբերությունները²: «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» բուհական դասագրքում կառավարման ձևը սահմանվում է որպես «պետության գլխի, իշխանության բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինների կազմակերպման, իրավական վիճակի և փոխհարաբերության համակարգ»³: Հանդիպում են այդ հայեցակարգի լայն և նեղ մեկնաբանություններ: Առաջին տեսակետը հանգում է նրան, որ տվյալ պետության կառավարման ձևի բնույթը կախված է

պետական բարձրագույն իշխանության կազմակերպումից, իսկ ավելի ստույգ՝ պետության ղեկավարի իրավական դիրքից⁴: Ըստ «կառավարման ձև» հասկացության լայն մեկնաբանության՝ այն իր մեջ ներառում է պետության և բնակչության, բարձրագույն իշխանության մարմինների, այդ մարմինների և տնտեսական-քաղաքական կենտրոնների միջև հարաբերությունները, ինչպես նաև քաղաքական ոլորտը, որտեղ իրականացվում են այդ հարաբերությունները⁵: Վ.Ե. Չիրկինը հերքում է երկու մեկնաբանություններն էլ, նրա կարծիքով՝ «նեղ մեկնաբանությունը չի բացահայտում պետության ձևի հիմնական կողմերը, լայնը՝ դուրս է գալիս ձևի սահմաններից»⁶: Նա առաջարկում է հետևյալ սահմանումը. կառավարման ձևը «պետությունը կառավարելու միջոց է, որը ներառում է պետական մարմինների կառուցվածքն ու փոխհարաբերությունները, ինչպես նաև նրանց ուղիղ և հետադարձ կապի ձևերը բնակչության հետ»⁷:

Ըստ Օ. Ի. Զազնակի՝ սա ամենաօպտիմալ սահմանումն է⁸: Հետխորհրդային քաղաքական և իրավաբանական գրականության մեջ «պետության կառավարման ձև» տերմինն ամրապնդվել է: Լայնորեն գործածվում են «միապետական կառավարման ձև», «հանրապետական կառավարման ձև», «նախագահական կառավարման ձև», «պառլամենտական կառավարման ձև», «խառը կամ կիսանախագահական կառավարման ձև» հասկացությունները: Ժամանակակից քաղաքագիտությունն ու իրավագիտությունը կառավարման ձևի դասակարգման ժամանակ հիմնականում կարևորում են այն հանգամանքը, թե պետության գլուխը ընտրվում (անկախ ուղղակի, թե անուղղակի ընտրությունների ձևից), թե ժառանգում է: Այս

¹ Տե՛ս Չիրկին Վ. Ե., «Ինչպիսի՞ կառավարման ձև գոյություն ունի ժամանակակից Ռուսաստանում», URL: www.russianjls.ru/downloads/N1A6.pdf:

² Տե՛ս Автономов А. С., «Правовая онтология политики: к построению системы категорий» - ст. 200.

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք»: Եր. ԵՊՀ, 2012թ., էջ 424:

⁴ Տե՛ս «Государственное право буржуазных и развивающихся стран: Учебник», А. А. Машин, Г. В. Барабашев, М., Юрид. лит., 1989. ст. 130.

⁵ Տե՛ս Благож Й., «Формы правления и права человека в буржуазных государствах» - ст. 196.

⁶ Տե՛ս Чиркин В. Е., «Конституционные институты формы государства», ст. 258.

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 259:

⁸ Տե՛ս Зазнаев Олег Иванович, «Полупрезидентская система: политико-правовой анализ». Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Государственное образовательное учреждение высшего профессионального образования «Казанский государственный университет им. В.И. Ульянова-Ленина», ст. 31.

դասակարգմամբ, որպես կանոն, պետությունները բաժանվում են միապետության և հանրապետության: Առաջին հայացքից տրամաբանական թվացող նման բաժանումն ունի էական թերություն. այն չի պատասխանում կառավարման ձևի բովանդակությանը վերաբերող հարցին: Դասակարգման ելակետում դրվում է ձևական գործոն. կարևորն այստեղ փոխարինվում է երկրորդականով, իսկ գործնականը՝ ձևականով: Կառավարման ձևի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ այս հարցում էականը, գլխավորը ոչ թե պետության գլխի պաշտոնի ստանձնման կարգն է, այլ պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև և պետական իշխանության բարձրագույն մարմինների ու ժողովրդի միջև հարաբերությունները, այդ հարաբերությունների բովանդակությունը:

Կառավարման ձևին անդրադառնալիս պետք է պատասխանել մի շարք հարցերի, որոնց պատասխաններն էլ իրենց հերթին պետք է հիմք դառնան ու կանխորոշեն այս կամ այն պետության կառավարման ձևը: Այս հարցերը կարելի է տարանջատել հետևյալ կերպ. առաջին՝ ինչպե՞ս է կազմավորվում գործադիր իշխանությունը, որ մարմինն է կազմավորում գործադիր իշխանությունը, երկրորդ՝ ինչպիսի՞ կառուցվածք ունի գործադիր իշխանությունը, այն երկփեղկված է, դուալիստական է, ամբողջությամբ պատկանում է մեկ անձի կամ մեկ մարմնի, երրորդ՝ ինչպիսի՞ լծակներ ունի օրենսդիրը գործադիր իշխանության նկատմամբ ընդհանրապես և նրա առանձին մարմնի նկատմամբ մասնավորապես, չորրորդ՝ ինչպիսի՞ն են «պետության գլուխ - գործադիր իշխանություն - օրենսդիր իշխանություն» հարաբերությունները:

Պետության գլխի պաշտոնը ժառանգաբար կամ ընտրությունների միջոցով ստանձնելու եղանակը, ըստ էության, վերը նշված և ոչ մի հարցի չի պատասխանում: Թեպետ որոշ հարցերի պատասխաններ կարելի է բխեցնել այդ հանգամանքից, սակայն միջազգային փորձը վկայում է դրանց ուղիղ կապի բացակայության մասին:

Խնդիրը պետք է վերլուծել նաև այն համատեքստում, թե գործնականում այդ համակարգն ինչպես է աշխատում, ինչպիսին են այդ մարմինների փաստացի լիազորությունները, այդ լիազորությունների փաստացի ծավալը, բովանդակությունը, պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխհարաբերությունները:

Անշուշտ, վերը նշված հարցերի սահմանադրական կարգավորումները կարևոր են, սակայն ոչ պակաս կարևոր է իրական, գործող կառավարման ձևի ուսումնասիրությունը՝ անկախ այն հանգամանքից, թե վերը նշված հիմքով այն դիտարկվում է որպես միապետություն, թե՛ հանրապետություն: Մեր ժամանակներում հանրապետության ու միապետության իրավահամեմատական վերլուծությունը գրեթե կորցրել է իր գիտական հետաքրքրությունը: Առավել մեծ թվով ուսումնասիրություններ այսօր նվիրված են հանրապետական կառավարման ձևի տարբեր տեսակներին: Գործնականում կարելի է արձանագրել, որ մեր ժամանակներում պետությունները միապետության և հանրապետության բաժանելը կորցրել է իր քաղաքական իմաստը:

Ներկայում «կառավարման ձևին» զուգահեռ սկսել է կիրառվել նաև «կառավարման համակարգ» հասկացությունը: Ն. Ա. Սախարովը պնդում է, որ գիտական տերմինաբանության տեսանկյունից ավելի ճիշտ է խոսել կիսանախագահական, նախագահական կառավարման համակարգերից՝ տարբերելով դրանք կառավարման ձևերից, որը կարող է լինել միապետական և հանրապետական⁹:

Այս տարանջատման հիմքերի առումով հետաքրքիր է նաև Ս. Գ. Պարեչինայի մոտեցումը, ըստ որի՝ անկարելի է խառնել «կառավարման ձև» և «կառավարման համակարգ» հասկացությունները, քանի որ, առաջինն արտահայտում է պետական իշխանության ընտրովի և ժառանգաբար ձևավորումը, իսկ երկրորդը՝ գործադիր և օրենսդիր մարմինների փոխհարաբերությունները և նրանց լիազորությունների հարաբերակցության տեսակը¹⁰: Նրա կար-

⁹ Տե՛ս Сахаров Н. А., “Институт президентства в современном мире”, - ст. 3.

¹⁰ Տե՛ս Паречина С. Г., “Институт президенства: история и современность”, / Под общ. ред. Е. В. Матусевича, - Мн.: ИСПИ, 2003. § 1.2.

ծիքով կառավարման ձևը տվյալ քաղաքական համակարգում բարձրագույն իշխանության ձևավորումն է, որը կարող է լինել ընտրովի և ժառանգական: «Կառավարման համակարգ» տերմինն առաջին հերթին ունի քաղաքական բովանդակություն: Ըստ էության, դրվում է ձևի և բովանդակության փոխհարաբերության հարցը: Մի դեպքում ձևն է ընդունվում հիմք՝ հաշվի չառնելով բովանդակությունը, երկրորդ դեպքում հիմք է ընդունվում բովանդակությունը՝ հաշվի չառնելով ձևը: Նման մոտեցման հետ որոշակի անհամաձայնություն ունի Ա. Ի. Զազնանը, որի համոզմամբ՝ պետության ղեկավարի փոխարինումը ընդամենը կառավարման հատկություններից մեկն է¹¹: Համաձայնելով այս կարծիքն այն մասով, որ պետության գլխի ձևավորման կարգը պայմանավորում, կանխորոշում է վերջինիս լիազորությունների ծավալը, հետևաբար՝ նաև կառավարման բովանդակությունը, այնուամենայնիվ պետք է նկատել, որ բացառություն չեն նաև այն երկրները, որտեղ ուղղակի ընտրված նախագահներն ունեն ավելի փոքր լիազորություններ, քան անուղղակի ընտրված նախագահները: Անշուշտ, կառավարման ձևի բովանդակության համար կարևոր է այն, թե պետության գլուխն ընտրվում է ուղղակի, անուղղակի, թե՛ ժառանգում պաշտոնը: Այս հանգամանքով է մասամբ պայմանավորված պետության գլխի լիազորությունների ծավալը, սակայն դա ևս մասամբ կարող է համարվել ձևական կողմ, տեսականորեն և գործնականում (անկախ այն հանգամանքից՝ կլինի ճիշտ կամ սխալ) անուղղակի ընտրված նախագահը կարող է ունենալ ավելի լայն լիազորություններ (թե՛ փաստացի, թե՛ սահմանադրորեն ամրագրված), քան ուղղակի ընտրված նախագահը: Լիբանանի 1926 թվականի մայիսի 23-ի սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ նախագահն ընտրվում է ա-

նուղղակի ընտրությունների միջոցով, խորհրդարանի կողմից: Սահմանադրության 4-րդ գլխի համաձայն՝ նախագահը պետության գլուխն է և ազգի հավաքական ուժի խորհրդանիշը: Նախագահը ղեկավարում է Պաշտպանության գերագույն խորհուրդը, Նախարարների խորհրդի կառավարման ներքո գտնվող Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարն է, ղեկավարում է անվտանգության բարձրագույն խորհուրդը, կարող է նախագահել կառավարության նիստերը, վարչապետի համաձայնությամբ կարող է հրավիրել կառավարության նիստ և այլն¹²: Մինչդեռ Ավստրիայի՝ 1920 թվականին ընդունված սահմանադրության համաձայն (1929 թվականի փոփոխություններով)՝ Հանրապետության նախագահն ընտրվում է ուղղակի ընտրությունների միջոցով, սակայն ունի նույնանման կամ ավելի պակաս լիազորություններ: Կարելի է նաև նկատել, որ «կառավարման ձև» հասկացությունը բնութագրում է ոչ միայն ձևական իրավաբանական կողմը, այլ նաև՝ փաստացի կողմը, որը գոյություն ունի օրենսդիր և գործադիր մարմինների փոխհարաբերությունների բարդ համակարգի տեսքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ կառավարման ձևի դասակարգման համար հարկ է առանձնացնել հետևյալ հիմնական չափանիշները, մասնավորապես՝ արդյոք պետության գլուխը՝ նախագահը, ընտրվում է համընդհանուր, ուղղակի ընտրությունների միջոցով, ունի ինքնուրույն լիազորություններ գործադիր իշխանության բնագավառում, արդյոք կառավարությունը պատասխանատու է խորհրդարանի առջև: Մնացած հանգամանքները, կարծում եմ, որ կարևոր, սակայն բնութագրիչ հատկանիշ չեն կառավարման ձևի դասակարգման համար:

¹¹ St' u Зазнаев Олег Иванович, “Полупрезидентская система: политико-правовой анализ”. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Государственное образовательное учреждение высшего профессионального образования “Казанский государственный университет им. В.И. Ульянова-Ленина”, ст. 33.

¹² St' u <http://worldconstitutions.ru/?p=90&page=2>:

ՍՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արցախի Պետական Համալսարանի
«Իրավունք» ամբիոնի դասախոս

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԹԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

Քաղաքացիական հասարակության և իրավական պետության զարգացումն անխուսափելիորեն առաջացնում է այնպիսի իրավիճակներ, որոնք պետությունից պահանջում են սահմանափակել որոշ սահմանադրաիրավական իրավունքներ և ազատություններ: Աշխարհի երկրների սահմանադրությունները, թույլատրելով իրավունքների սահմանափակում, սահմանում են դրանց իրականացման խիստ կարգ և հիմքեր: Սահմանադրաիրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների սահմանափակումը որպես սահմանադրաիրավական երևույթ, ներառում է հետևյալ տարրերը. սահմանափակման հիմքը, սահմանափակման նպատակը, մարդու իրավունքները սահմանափակող հանգամանքները, սահմանափակվող իրավունքները (սահմանափակման օբյեկտը), սահմանափակման ոչ ենթակա իրավունքները, մարդու իրավունքները սահմանափակող սուբյեկտները, մարդու իրավունքների սահմանափակման վերաբերյալ միջազգային հանրության տեղեկացումը¹: Թվարկված բոլոր տարրերը սահմանված են ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ չկա միասնական մոտեցում «սահմանափակում» հասկացության վերաբերյալ: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ամենատարբեր հեղինակավոր փաստաթղթերն օգտագործում են «պետությունների նահանջն իրենց պարտավորություններից», «սահմանափակում», «նահանջ իրենց պարտավորություն-

ներից» և այլ ձևակերպումներ²: Ընդհանրացնելով կարող ենք արձանագրել, որ սահմանափակումը Սահմանադրությամբ և օրենքով արդեն ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով³: Իրավունքների սահմանափակման ժամանակ գլխավոր սկզբունքը պետք է լինի սահմանափակվող իրավունքների համաչափությունն ու համարժեքությունը, որպեսզի չխախտվեն սահմանադրական արժեքները: Իրավունքների սահմանափակումը պետք է լինի կոնկրետ, պարզ և հստակ, հղում կատարվի Սահմանադրության կոնկրետ հոդվածի, չթույլատրվի սահմանված սահմանափակումների վերաբերյալ լայն, երկիմաստ մեկնաբանություններ և դրանց կամայական կիրառում:

ԼՂՀ Սահմանադրության 52-րդ հոդվածի համաձայն Սահմանադրության 23-25-րդ, 27-31-րդ հոդվածներում, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 34-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա պիտանի, անհրաժեշտ և համարժեք է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործության կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Սահմանափակման ենթակա են հետևյալ ի-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 92 2016

¹ St'u Якубовская Д. Д., “Механизм реализации ограничения конституционных прав и свобод человека и гражданина в Российской Федерации”, автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук., ст. 18.
² St'u «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ», Գ.Հարությունյանի և Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, «Իրավունք» 2010թ., էջ 508:
³ St'u նույն տեղում, էջ 509:

րավունքները. անձնական և ընտանեկան կյանքի հարգման (հոդված 23), բնակարանի անձեռնմխելիության (հոդված 24), ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու (հոդված 25), կարծիքն ազատորեն արտահայտելու (հոդված 27), պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու (հոդված 28), միավորվելու (հոդված 29), կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու (հոդված 30), խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր, և այլ հավաքներ անցկացնելու (հոդված 31), ընտրական իրավունք (32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր), գործադուլի (34-րդ հոդվածի 4-րդ մաս) իրավունքները:

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցը որոշելիս ՀՀ և ԼՂՀ Սահմանադրությունները դեկլարվել են այնպիսի հեղինակավոր միջազգային փաստաթղթերով, ինչպիսիք են 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1950 թվականի Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն:

Հետևելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 29-րդ հոդվածի պահանջներին՝ Սահմանադրությունն իրավունքների և ազատությունների սահմանափակման ինստիտուտը ներառում է միայն որոշակի հիմնավորումների առկայության դեպքում: Հռչակագիրը տալիս է հետևյալ հիմնավորումները. իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթարկվի միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով նախատեսված են բացառապես այլոց իրավունքների և ազատությունների ապահովման ու պատշաճ ճանաչման նպատակով, ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգն ու

ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով: Այս հիմքերը կասկածի տակ չեն դրվում, քանի որ խոսքը փոքրամասնության կողմից մարդկանց մեծամասնության իրավունքների և շահերի չարաշահման կամ էլ՝ իրավունքների և ազատությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին է⁴:

Հարկ է ընդգծել, որ Սահմանադրությունների մեծամասնությունը կամ ընդհանրապես չի նշում սահմանափակվող իրավունքների մասին (Ճապոնիա, Ավստրիա, Լատվիա, Իտալիա, Արգենտինա) կամ ընդհանրական, մակերեսորեն է նշում սահմանափակման հնարավորությունն առանց որևէ հոդվածի հղում կատարելու, օրինակ՝ Ռումինիայի Սահմանադրության 49-րդ հոդվածը⁵ այսպես է կարգավորում իրավունքների սահմանափակման հարցը. «Որոշ իրավունքների և ազատությունների իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով և միայն, եթե դա համապատասխան դեպքում անհրաժեշտ է ազգային անվտանգության, կարգուկանոնի, հասարակության առողջության կամ բարոյականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, քրեական հետաքննության իրականացման պաշտպանության նպատակով, տարերային աղետների կամ հատուկ լրջության աղետների հետևանքների կանխարգելման համար: Սահմանափակումը պետք է համաչափ լինի այդ իրավիճակին և չի կարող ոտնձգել իրավունքների և ազատությունների գոյությանը»: Նմանատիպ հոդվածներ են պարունակում նաև Պորտուգալիայի (հոդվածներ 18 և 270), Շվեյցարիայի (հոդված 36), Ֆինլանդիայի (հոդված 23), Գերմանիայի (հոդված 19), Ռուսաստանի (հոդված 55) և այլ պետությունների սահմանադրությունները: Առավել քիչ են այն պետությունների սահմանադրությունները, որոնք կոնկրետ հղում են կատարում սահմանափակման ենթակա իրավունքների վերաբերյալ: Դրանցից են ՀՀ և ԼՂՀ Սահմանադրությունները: Այս տեսակետից առավել հետաքրքիր է Լեհաստանի Սահմանադրությունը, որի 233-րդ հոդվածը մեկ առ մեկ սահմանում է այն բոլոր

⁴ Տե՛ս «Конституционное право Российской Федерации», М. В. Баглай, НОРМА, М. 2007, ст. 190.

⁵ Տե՛ս Ռումինիայի Սահմանադրությունը ընդունվել է 1991 թվականի նոյեմբերի 21-ին:

իրավունքները (իսկ դրանք բավականին ընդարձակ են), որոնք չեն կարող սահմանափակվել ռազմական և բացառիկ պայմաններում: Այդօրինակ մոտեցում է ցուցաբերել նաև ԼՂՀ Սահմանադրությունը, որի 53-րդ հոդվածում նշվում են մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ և ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 17-21-րդ, 26-րդ և 44-50-րդ հոդվածներում նշվածների, որոնք կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Չսահմանափակվող իրավունքներն են՝ արժանապատվության իրավունքը (հոդված 17), կյանքի իրավունքը (հոդված 18), ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (հոդված 19), Սահմանադրությամբ կամ օրենքով չարգելված և այլոց իրավունքները չխախտող գործողություններ անելու ազատությունը (հոդված 20), օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքը (հոդված 21), մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը (հոդված 26), իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը (հոդված 44), անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունքը (հոդված 45), իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդված 46), իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալու պարտավորությունից ազատվելու իրավունքը (հոդված 47), անմեղության կանխավարկածի իրավունքը (հոդված 48), արարքի կատարման պահին օրենքով հանցագործություն չհամարվող արարքի համար քրեական հետապնդման չենթարկվելու և մեղավոր չճանաչվելու իրավունքը (հոդված 49), դատավճռի վերանայման իրավունքը (հոդված 50):

Իսկ 54-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող աղավաղել այդ իրավունքների և ազատությունների էությունը, որը կարևորագույն երաշխիք է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Պետք է ընդգծել, որ այս տեսակետից առավել հուսալի են այն պետությունների սահմանադրությունները, որոնք մարդու և քաղա-

քացու իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցը կարգավորում են Սահմանադրությամբ կամ սահմանադրական օրենք ընդունելու միջոցով, այլ ոչ թե թողնում են օրենսդրի կամ գործադրի հայեցողությանը՝ կամայականություններից խուսափելու նպատակով:

Սակայն հարկ է նշել, որ ԼՂՀ պարագայում, որն իրենից ներկայացնում է փոքր, զարգացող, միջազգայնորեն չճանաչված պետություն և իր կենսագործունեությունն իրականացնում է հարևան ադրբեջանական պետության հետ ռազմա-քաղաքական բարդ հարաբերությունների պայմաններում, ավելորդ չէ, և նույնիսկ անհրաժեշտ է սահմանափակել ԼՂՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի ուժը ռազմական և արտակարգ դրության ժամանակ: Մանավանդ, որ նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրության 52-րդ հոդվածում նախատեսված հիմքերով:

Ի դեպ, ԼՂՀ Սահմանադրության նախագծում 26-րդ հոդվածը (մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք) ներառված էր 52-րդ հոդվածով թվարկված սահմանափակման ենթակա իրավունքների շրջանակներում, սակայն անհասկանալի պատճառներով Սահմանադրության վերջնական տարբերակում՝ հանրաքվեով ընդունելուց հետո հրապարակված պաշտոնական տեղեկագրում, այդ կետն արդեն հանված էր:

Համաշխարհային սահմանադրական տեսության և պրակտիկայի մեջ հանրահայտ է, որ քաղաքացիական իրավունքների և ազատությունների սահմանափակումն իրավաչափ է արտակարգ իրավիճակներում (համաճարակներ, միջէթնիկական բախումներ, տարերային աղետներ, քաղաքացիական պատերազմներ, զանգվածային անկարգություններ և այլն): Դա ճանաչվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդված 4), որը, սակայն, պահանջում է, որպեսզի արտակարգ դրության մասին անդամ պետությունների կողմից պաշտոնապես հայտարարվի և դրա մասին հայտնվի այլ պետություններին: Ինչպես նշվեց,

ԼՂՀ (ՀՀ) Սահմանադրությունը նույնպես սահմանում է արտակարգ և ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման հնարավորություններ: ՀՀ և ԼՂՀ Սահմանադրություններում կա ևս մի կարևոր երաշխիք: Դա արտակարգ դատարանների ստեղծման արգելքն է: Այսինքն, նույնիսկ արտակարգ դրության պայմաններում շարունակում են գործել ընդհանուր իրավասության դատարանները, որոնք երաշխավորում են քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն անօրինական և խտրական գործողություններից: Մինչդեռ արտակարգ դատարանները դրանք քրեական գործերը, մեղադրյալին առանց պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ տրամադրող, արագացված քննություն իրականացնող դատարաններն են⁶:

Ժամանակակից դեմոկրատական պետություններում արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անհամապատասխան է գտել Թուրքիայում ստեղծված «պետական անվտանգության դատարանները», ելնելով Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից («անկախ և անաչառ դատարանի իրավունք» (հոդված 6)), մինչդեռ թուրքական նշյալ դատական ատյաններն իրենց կազմի մեջ քաղաքացիական դատավորների հետ մեկտեղ ներառում են նաև զինվորական դատավորներին⁷:

Արտակարգ դրությունը հատուկ իրավական ռեժիմ է, որը մտցվում է ժամանակավորապես՝ ապահովելու քաղաքացիների անվտանգությունը և սահմանադրական կարգի պաշտպանությունը: «Արտակարգ դրության մասին» ԼՂՀ օրենքի⁸ 1-ին հոդվածի համաձայն՝ ԼՂՀ Սահմանադրությանը և «Արտակարգ դրության մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում կամ նրա մի հատվածում մտցվող արտակարգ դրությունը նշանակում է՝ պետական իշխանության և կառավարման մարմին-

ների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ, որը թույլ է տալիս «Արտակարգ դրության մասին» օրենքով սահմանված քաղաքացիների իրավունքների և ազատությունների ու իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակում, ինչպես նաև լրացուցիչ պարտականությունների սահմանում նրանց նկատմամբ: Արտակարգ դրությունը ժամանակավոր միջոցառում է և կարող է մտցվել բացառապես հանրապետության քաղաքացիների անվտանգության ապահովման և սահմանադրական կառուցվածքի պահպանության շահերից ելնելով: Արտակարգ դրությունը կարող է մտցվել միայն այնպիսի պայմաններում, երբ հանգամանքներն իրենցից այնպիսի իրական արտակարգ ու անխուսափելի սպառնալիք են ներկայացնում հանրապետության քաղաքացիների անվտանգությանը կամ սահմանադրական կառուցվածքին, որի վերացումն անհնար է առանց արտակարգ միջոցներ կիրառելու:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում մտցվող արտակարգ դրության գործողության ժամկետը չի կարող անցնել 3 ամսից, իսկ հանրապետության տարածքի մի հատվածում մտցվողը՝ 60 օրից:

Արտակարգ դրության ռեժիմի ապահովման համար ընդունված ակտերն ուժը կորցնում են արտակարգ դրությունը դադարեցնելու հետ միաժամանակ, առանց այդ մասին հատուկ տեղեկացման: Իսկ Սահմանադրության 68-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահն աղետի դեպքում կամ այլ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին, անհրաժեշտության դեպքում հայտարարում է արտակարգ դրություն: Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում իրավունքի ուժով գումարվում է Ազ-

⁶ Տե՛ս «Конституционное право Российской Федерации» М. В. Баглай, НОРМА, М. 2007, ст. 194.

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 195:

⁸ «Արտակարգ դրության մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 1992 թվականի հունվարի 8-ին:

գային ժողովի հատուկ նիստ: Արտակարգ և ռազմական դրության իրավական ռեժիմները սահմանվում են օրենքներով:

ԼՂՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ հանրապետության նախագահը հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հաստատում է ռազմական դրություն, միաժամանակ, կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին: Նշենք, որ դեռևս 1995 թվականին Արցախի Հանրապետությունն ընդունեց ռազմական դրության մասին օրենքը⁹, որի հիման վրա հանրապետության նախագահը երկրում մտցրեց ռազմական դրության իրավական ռեժիմ: Այդ պահից մինչ օրս ԼՂՀ-ում ռազմական դրության իրավական ռեժիմը պարբերաբար երկարաձգվում է: Չնայած այդ հանգամանքին՝ մեր երկրում շարունակում են բնականոն գործել պետական ու հասարակական մարմինները: Իշխանության թևերը գործում են զսպիչների և հակակշիռների համակարգի հիման վրա, պաշտպանվում ու երաշխավորվում են մարդու և քաղաքացու բոլոր իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, գործում են դատական պաշտպանության բոլոր միջոցներն ու օղակները, ոչ մի իրավունք սահմանափակված չէ նույնիսկ ռազմական դրության պայմաններում: Եվ դա այն դեպքում, երբ, որպես կանոն, ռազմական դրության ժամանակ մարդու մի շարք կարևոր իրավունքներ ու ազատություններ չեն իրականացվում և սահմանափակվում են:

Սահմանադրության 53-րդ հոդվածով նշված նպատակների համար մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը նախատեսված է նաև այլ օրենքներով: Այդ սահմանափակումներն ամենից հաճախ հանդես են գալիս որպես անհրաժեշտ պայմաններ իրավապահ մարմինների գործունեության համար, որոնք կոչված են պաշտպանելու բոլոր քաղաքացիների իրավունքներն ու ա-

զատությունները: Այդպիսի օրենքներն անհրաժեշտ են քաղաքացիների մեծամասնության շահերի համար, միևնույն ժամանակ դրանց չարաշահման վտանգ են պարունակում, ինչը ստիպում է օրենսդիրն մանրամասնորեն արձանագրել համապատասխան մարմինների իրավունքների շրջանակները և քաղաքացիների նկատմամբ դրանց հարկադիր կիրառման պայմանները: Այդպիսի օրենքներից են ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, օպերատիվ-հետախուզական գործունեության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ահաբեկչության դեմ պայքարի, պաշտպանության մասին օրենքները և այլն¹⁰:

Այսպիսով, Սահմանադրությամբ թվարկված մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմնավորումներն ակնհայտորեն նախատեսված են անկանխատեսելի հանգամանքների պարագայում, որոնք կարող են պահանջել որոշ իրավունքների ուժեղացված պաշտպանություն ի հաշիվ մարդու այլ իրավունքների սահմանափակման:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը հնարավոր է միայն Սահմանադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար (սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանություն, պետական և հասարակական անվտանգություն, հասարակական կարգի պահպանություն, հանցագործության կանխում, հանրության առողջություն ու բարոյականություն, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանություն), ընդ որում՝ այդ նպատակները պետք է մեկնաբանվեն միջազգային ակտերի դրույթներին համապատասխան, և միայն այն չափով, որքան դա անհրաժեշտ է այդ նպատակներին հասնելու համար: Օրենքում պետք է պարզ բացատրվի սահմանափակվող կոնկրետ իրավունքի (ազատության) և հասանելիք սահմանադրական նպատակների միջև կապը: Իսկ այնպիսի նպատակ, ինչպիսին է սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությունը,

⁹ «Ռազմական դրության մասին» ԼՂՀ օրենքը ընդունվել է 1995 թվականի սեպտեմբերի 11-ին, որով ուժը կորցրած է ճանաչվել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թվականի օգոստոսի 12-ի «ԼՂՀ ռազմական դրություն մտցնելու մասին» հրամանագիրը:

¹⁰ Տե՛ս www.arlexis.am կայքէջում:

պետք է հստակեցվի: Հարկ է մեկնաբանել, թե սահմանադրական կարգի կոնկրետ որ հիմքն է կարիք զգում պաշտպանության իրավունքների և ազատությունների սահմանափակման միջոցով:

Ողջունելի են ՀՀ և ԼՂՀ Սահմանադրությունների այն հոդվածները, որոնք մեկ առ մեկ նշում են մարդու և քաղաքացու սահմանադրական այն իրավունքներն ու ազատությունները, որոնք կարող են որոշակի հանգամանքներում սահմանափակվել:

Կարծում եմ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկա պայմաններում, երբ

Р. А. Исмагилов утверждает, что предметом преступления могут быть останки трупа человека, то есть такие части человеческого тела, наличие которых неоспоримо свидетельствует о факте смерти человека, которому они принадлежали (голова, туловище, жизненно важные внутренние

¹⁶ <https://66.mvd.ru/news/287745/>

¹⁷ "Законность" 2001, Ном. 10.

¹⁸ <http://enc-dic.com/ozhegov/Trup-36105.html>

органы, конечности). Утрата данных анатомических элементов является несовместимой с жизнью. Поэтому не относятся к предмету преступного надругательства кисть, стопа, палец, половой член и другие анатомические элементы человеческого тела, утрата которых однозначно не свидетельствует о наступлении смерти человека¹⁹. По нашему мнению, совершение надругательства даже над отделёнными от живого человека частями тела, должны считаться преступными.

Нерешённой проблемой остаётся вопрос об уголовно-правовой оценке аналогичных действий, совершённых в отношении тел мертворождённых младенцев. Мертворождением является момент отделения плода от организма матери посредством родов, при сроке беременности 22 недели и более, при массе тела новорожденного 500 грамм и более (или менее 500 грамм при многоплодных родах) или в случае, если масса тела ребенка при рождении неизвестна, при длине тела новорожденного 25 см и более, при отсутствии у новорожденного признаков живорождения.

Согласно праву, надругаться над их телами невозможно, ибо они никогда не были живыми, что не соответствует требованиям равной уголовно-правовой охраны прав и законных интересов личности, в том числе и в сфере общественной нравственности. Очевидно, что надругательство над телом мертворождённого младенца надо признать таким же надругательством, как и надругательство над телом умершего младенца.

Ст. 184 проекта УК РА также не позволяет привлекать к ответственности лицо, которое будет заниматься оборотом фетальных тканей, так как указывается лишь на органы, ткани, клетки человека и трупа. В современном понимании плод нельзя назвать ни человеком, ни трупом, а понятие эмбриона включает только зародыш сроком до восьми недель беремен-

ности. Поэтому выявляется необходимость дополнения УК РА положением следующего содержания:

Статья. “Незаконное использование и переработка останков, органов, тканей и клеток человека и его плода”:

“Незаконное использование и переработка органов, тканей, клеток человека, его плода, их останков, иных физиологических и анатомических материалов, а равно незаконное использование материалов, изготовленных на основе или с использованием указанных объектов”.

Нам представляется, что более верным решением было бы отдельное предусмотрение состава, предусматривающего уголовную ответственность за незаконное изъятие органов и тканей от трупного донора. Статья может быть размещена в раздел “Преступления против человека”, в гл. 17, куда должны быть также перемешены преступления, нарушающие целостность трупа, изъятие органов для пересадки в отсутствие прижизненного согласия и др.

Кроме того, можно предложить следующую редакцию:

Статья. “Надругательство над телом мертвого человека”:

“Надругательство над телом мертвого человека, его останков и праха, человеческого плода, его осквернение, незаконная эксгумация ... /далее по тексту статьи/”

Статья. “Незаконная эксплантация органов и тканей у умершего человека”

“Незаконная эксплантация органов, тканей, клеток, а также иных анатомических материалов у трупа человека или его мертвого плода или эмбриона, произведенные без законодательно определенных условий и порядка изъятия, а равно без согласия умершего или его законных представителей, - наказывается ...

То же деяние, совершенное с корыстной целью наказывается (...).

¹⁹ Исмагилов Р. А., “Уголовно - правовая характеристика предмета надругательства над телами умерших”, - Академический вестник. Изд-во: Тюменская государственная академия мировой экономики, управления и права, Тюмень: 2010, ст. 135-140.

ՀԱՅԿ ԵՐԵՄՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՊԱՋՈՒՅՑՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ ՇԱՐՅԵՐ
(ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Ստորև շարադրված հոդվածը նպատակ ունի իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ վերլուծության ենթարկել Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարություններում ապացույցների տեսակները և դասակարգման խնդիրները, ցույց տալ երկու երկրներում առկա տարբերությունները՝ շեշտն առավելապես դնելով Գերմանիայի իրավական այն կարգավորումների և դիրքորոշումների ներկայացման վրա, որոնք էականորեն տարբերվում են:

Նեղ առումով ապացույցը կամ ապացուցման միջոցը (Beweismittel) քրեադատավարական օրենքով սահմանված ապացույցների հավաքման գործողությունների արդյունքում փաստերի մասին անձից կամ իրից ստացված տեղեկատվություն կամ տվյալ է, որը դատարանի և արդարադատության մասնակիցների մոտ համոզմունք է ստեղծում պատժելի արարք կատարված լինել-չլինելու կամ որևէ մեկի մեղավոր կամ անմեղ լինելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասն ապացույց է համարում ցանկացած փաստական տվյալ, որի հիման վրա պարզվում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Ինչպես տեսնում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն ապացույցներին ընդհանրական վերաբերմունք է ցույց տալիս: Այդուհանդերձ օրենքով արարքի և մեղքի վերաբերյալ հարցերը կարևորվել և դուրս են բերվել գործի ճիշտ լուծ-

ման համար նշանակություն ունեցող մնացյալ հանգամանքների շարքից: Եվ դա պատահական չէ, քանի որ դրանք ապացուցման ենթակա ամենակարևոր հանգամանքներն են, որոնց ընդունված է անվանել մեղքի և արարքի իրավական հետևանքներին (պատժին) վերաբերող հարցեր (Schuld- und Rechtsfolgenfrage): Ուստի դրանց ապացուցմանը կոչված միջոցների ձեռքբերումը պետք է առավել խիստ ընթացակարգով կատարվի:

Նախորդ պարբերության վերջում քննարկված ապացույցների տարբերակման հարցի առնչությամբ Գերմանիայի քրեական դատավարությունում առանձնացվում է ապացուցման գործընթացի երկու կարգ՝ խիստ (Strengbeweisverfahren) և ազատ (Freibeweisverfahren): Ապացուցման խիստ կարգը վերաբերում է մեղքի և արարքի իրավական հետևանքների հարցերին՝ հիմնական քննության (դատական քննության) փուլում: Խիստ կարգում թույլատրելի են միայն օրենքով նախատեսված ապացույցները, որոնց հանգամանալից կանդրադառնանք ստորև: Ազատ կարգը վերաբերում է մեղքի և արարքի իրավական հետևանքների հարցերին՝ մինչև հիմնական քննության սկիզբը, ինչպես նաև դատավարական հարցերին, օրինակ՝ երբ մեղադրյալը նախնական քննության փուլում հարցաքննության ժամանակ նշում է իր այլուրեքության մասին, ապա հարցաքննություն իրականացնող պաշտոնատար անձը կարող է անմիջապես զանգահարել այլուրեքության հաստատման կամ հերքման համար պիտանի տեղեկատվություն հաղորդելու ունակ որևէ անձի և ստուգել մեղադրյալի ցուցմունքը: Այսինքն նախնական քննության փուլում բոլորովին էլ պարտադիր չէ, որ մեղադրյալի ցուցմունքի հավաստիությունը ստուգվի դատավարական կարգով ամրագրված այլ ապացույցով, դա պար-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 92 2016

զապես կարող է արվել, օրինակ՝ հեռախոսով փոխանցվող տեղեկատվությամբ: Որպես ապացուցման ենթակա դատավարական հարցի օրինակ կարող է լինել հետևյալը, մասնավորապես՝ արդյոք մեղադրյալը հարցաքննությունից առաջ իր իրավունքների մասին ծանուցվել է, թե՛ ոչ:

Ազատ կարգում կարող են օգտագործվել նաև այնպիսի տեղեկություններ, որոնք որպես ապացույց նախատեսված չեն օրենքով: Այստեղ համոզմունքի բարձր աստիճան չի պահանջվում, անգամ բավարար է դատարանն ընդունի, որ ամենայն հավանականությամբ փաստը տեղի է ունեցել: Երբեմն կարող է երկընտրելի լինել, թե պարզելու ենթակա փաստը զուտ դատավարական նշանակություն ունի, թե վերաբերում է նաև մեղքին և արարքի իրավական հետևանքներին, օրինակ՝ հարցաքննության արգելված մեթոդների կիրառման փաստի պարզումը: Եթե որևէ նման երկմտանք է առաջ գալիս, ապա վրա է հասնում ապացուցման խիստ կարգը¹:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածը սահմանում է այն հանգամանքները, որոնք միայն ապացույցների հիման վրա են ենթակա հաստատման: Այս հոդվածի և դատավճիռ կայացնելիս դատարանի լուծման ենթակա հարցերը սահմանող 360-րդ հոդվածի դրույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանում թեև ոչ հստակորեն, սակայն նույնպես առկա է ապացուցման գործընթացի տարբերակում, որով առավել խիստ մոտեցում է ցուցաբերվում մեղքի և արարքի իրավական հետևանքների հարցերին:

Ապացուցման ենթակա փաստերը տարբերակվում են հիմնականի, հանցանշանայինի և օժանդակի: Ըստ այդմ էլ, կախված նրանից թե ինչպիսի փաստի հաստատմանն է կոչված ապացույցը, առանձնացվում են ուղղակի և անուղղակի ապացույցներ: Հիմնականն այն փաստերն են, որոնք ուղղակիորեն համընկնում են քրեահրավական նորմերով նախատեսված արարքի հատկանիշներին, օրինակ՝ վկան տե-

սել է, թե ինչպես է Ա-ն սպանել Բ-ին: Հանցանշանային փաստերը (Indiztatsachen) թույլ են տալիս եզրակացություն անել հիմնական փաստերի մասին, օրինակ՝ վկան տեսել է, որ զինված Ա-ն փախուստի է դիմում դեպքի վայրից, հետևաբար՝ Ա-ն կարող է լինել Բ-ին սպանողը: Օժանդակ փաստերը վերաբերում են ապացույցների ապացուցողական ուժին, օրինակ՝ այնպիսի փաստեր, որոնք կասկածի տակ են դնում վկայի ցուցմունքի արժանահավատությունը: Հանցանշանային և օժանդակ փաստերը հաստատող ապացույցներն անուղղակի ապացույցներ են:

Քրեական դատավարությունում ապացույցները տարբերակվում են նաև այլ հիմքերով՝ սկզբնական և ածանցյալ, մեղադրող և արդարացնող, սակայն ստորև մենք կանդրադառնանք միայն ապացույցների տարբերակմանը ըստ դրանց ծագման աղբյուրի, հավաքման, ամրագրման և հետազոտման ձևի:

Ապացույցների դասակարգումը գործնական նշանակություն ունի, քանի որ յուրաքանչյուր ապացուցման միջոցի հավաքումը, հետազոտումը և դրանից ստացված տեղեկատվության արժանահավատության գնահատումն իր առանձնահատկությունն ունի: Այդ պատճառով կարևոր է ապացույցների տարբերակման հստակ կարգի սահմանումը և պահպանումը: Դրա նպատակն է բացառել որևէ ապացույցի որպես այլ տեսակի ապացույց օգտագործելը, օրինակ՝ վկայությունը որպես փորձագիտական ապացույց, փորձագետի եզրակացությունը կամ նյութերի նախապատրաստման ընթացքում վերցված բացատրությունը որպես փաստաթղթային ապացույց: Վերջին օրինակի արգելքը Գերմանիայի քրեական դատավարությունում ամրագրված է ապացույցների անմիջական հավաքման (հետազոտման) սկզբունքից (Unmittelbarkeitsgrundsatz) բխեցվող անձնական ապացույցների առաջնահերթության վերաբերյալ հիմնադրույթով (250 StPO²):

Անձնական ապացույցների առաջնահերթության սկզբունքն ամենևին չի նշանակում, որ իրեղեն ապացույցները պակաս արժանա-

¹ Տե՛ս Werner Beulke, Strafprozessrecht, Heidelberg [u.a.] 2012, S. 123; Bernd Heinrich/Tobias Reinbacher, Examinatorium Strafprozessrecht, Humboldt Universität zu Berlin 2014, Arbeitsblatt Nr. 36, <http://heinrich.rewi.hu-berlin.de/download/strpr>:

² Տե՛ս Strafprozessordnung - 1877 թվականի Գերմանիայի քրեական դատավարության կանոնակարգ:

հավատ են: Ընդհակառակը, գոյություն ունի անձնական ապացույցների սուբյեկտիվությամբ պայմանավորված հավաստիության ռիսկ, որը նվազեցվում է դրանց աղբյուր հանդիսացող անձանց կողմից երդում տալով կամ սուտ ցուցմունքի կամ կեղծ փորձագիտական եզրակացության համար իրավական պատասխանատվության ենթարկվելու մասին նախազգուշացմամբ: Անձնական ապացույցների առաջնահերթության սկզբունքը նշանակում է. «Եթե ինչ-որ փաստի ապացուցումը հիմնվում է որևէ անձի ընկալման վրա, ապա նա պետք է հարցաքննվի հիմնական քննության փուլում: Հիմնական քննության փուլում կատարվելիք հարցաքննությունը չի կարող փոխարինվել նախկինում կատարված հարցաքննության արձանագրության կամ գրավոր հայտարարության հրապարակմամբ» (250 StPO): Այս հիմնադրույթից առկա են բացառություններ, որոնք սահմանված են StPO 251-րդ պարագրաֆով:

Ապացույցները սահմանափակ թվով են (Numerus clausus der Beweismittel): Սա նշանակում է, որ հիմնական քննության փուլում մեղքի և արարքի իրավական հետևանքների վերաբերյալ այլ միջոցների օգտագործումը որպես ապացույց, քան նրանք, որոնք սահմանված են օրենքով, անթույլատրելի է: Գերմանիայի քրեական դատավարությունում թույլատրելի ապացույցները չորսն են՝ վկայություն, փորձագիտական ապացույց, փաստաթղթային ապացույց, զննելի ապացույց: Գերմանական օրենքը մեղադրյալի ցուցմունքը չի դասում ապացույցների շարքին, սակայն ապացույցների ազատ գնահատման սկզբունքը դատավորներին թույլ է տալիս այն դիտարկել որպես ապացույց: Այս տեսակետից մեղադրյալի ցուցմունքը ապացույց է համարվում միայն լայն իմաստով:

Կախված նրանից տեղեկատվության աղբյուրը անձ է, թե իր՝ ապացույցները բաժանվում են անձնականի և իրեղենի: Վկայությունը և փորձագիտական ապացույցն անձնական ապացույցներ են, որոնց աղբյուրը դատավարու-

թյան մասնակից անձն է՝ վկան կամ փորձագետը: Վարույթն իրականացնող մարմնին ուղղված վկայի կամ փորձագետի բանավոր կամ գրավոր խոսքն էլ ապացույցն է: Փաստաթղթային և զննելի ապացույցներն ունեն իրեղեն բնույթ, քանի որ դրանց աղբյուրը դատավարության մասնակից անձը չի, այլ դրանք իրեղեն ամրագրում ունեն³:

ա) վկայություն

Ըստ Գերմանիայի կայսերական դատարանի սահմանման՝ վկան այն անձն է, որն այլ անձի դեմ հարուցված քրեական գործով փաստերի վերաբերյալ իր ընկալումները ցուցմունքի տեսքով հաղորդելու պարտականություն ունի⁴: Ցանկացած մարդ կարող է լինել վկա, անգամ մանկահասակներն ու հոգեկան հիվանդությամբ տառապողները: Եթե անձը պետք է միայն զննվի⁵ (օրինակ՝ ստացած մարմնական վնասվածքի կապակցությամբ), ապա նա զննության օբյեկտ է և ոչ թե վկա: Վկայության առարկա չեն կարող լինել գնահատողական դատողությունները կամ իրավական դիրքորոշումները: Սակայն վկայության առարկա են յուրաքանչյուր մարդուն բնական թվացող եզրահանգումները, որոնք զուտ զգայական ընկալման հետ մեկտեղ ձևավորում են եղելիության մտապատկերը⁶: Այդպիսի եզրահանգման օրինակներ են վկայի ընկալումը որևէ անձի անգիտակից աստիճանի գինովցած լինելու կամ ինչ-որ մի տրանսպորտային միջոցի արագ ընթանալու վերաբերյալ:

Որպես վկա կարող են հանդես գալ նաև դատավարության այլ մասնակիցները: Եթե դատավորը նույն գործով որպես վկա հարցաքննվել է, ապա օրենքի ուժով նա արդեն բացարկվում է (22 կետ, 5 StPO): Ի տարբերություն դատավորի, դատախազը կարող է նույն գործով վկա լինել: Թե որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը դատավարությանն ինչ ծավալով կարող է թույլատրելի համարվել, կախված է նրանից, թե ինչին է վերաբերում նրա ցուցմունքը: Եթե, օրինակ՝ նա հարցաքննվել է այնպիսի հարցերի շուրջ, որոնք արարքի ա-

³ ՀՀ քրեական դատավարությունում «իրեղեն ապացույց» տերմինն օգտագործվում է նեղ իմաստով՝ դրա տակ հասկանալով միայն առարկաները, մինչդեռ փաստաթղթերը ևս իրեղեն բնույթի ապացույց են:

⁴ St'ս RGSt 52, 289.

⁵ 1998 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կիրառված է «քննում» տերմինը (հոդված 220):

⁶ St'ս RGSt 37, 371.

պացուցման համար կարևոր են, ապա դատական վիճաբանությունների փուլում նրա ցուցմունքի արժանահավատությունը պետք է գնահատի այլ դատախազ: Այսինքն, դատախազը կշարունակի մասնակցել դատաքննությանը, սակայն որպեսզի կասկածի տակ չդրվի նրա օբյեկտիվությունն իր մեղադրական ճառով սեփական ցուցմունքը գնահատելու իրավունք չի ունենա: Այս մոտեցումը արձանագրված է Գերմանիայի դաշնային դատարանի (BGH) առաջին քրեական սենատի որոշմամբ⁷, որով նա իր թերահավատությունն արտահայտեց դատական պրակտիկայում արմատացած այն կարծիքին, ըստ որի եթե դատախազը վկայություն է տվել նույն գործով, ապա պարտադիր կողմնակալություն կունենա:

Պաշտպանը նույնպես կարող է նույն գործով վկա լինել: Դեռ ավելին, նաև պաշտպանի և վստահորդի հարաբերությունների ներքին կողմը կարող է լինել հարցաքննության առարկա, սակայն միայն այն դեպքում, երբ վստահորդը պաշտպանին ազատել է լռելու պարտականությունից (53, 2-րդ պարբերություն, StPO): Այս դեպքում օրենքը պաշտպանին պարտավորեցնում է որպես վկա ցուցմունք տալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու ընթացքում իրեն հայտնի դարձած փաստերի մասին: Այդուհանդերձ գերմանական իրավաբանական գրականության մեջ գնալով իշխող է դառնում այն կարծիքը, որ, հաշվի առնելով պաշտպանի՝ որպես արդարադատության մասնակցի անկախ կարգավիճակը, StPO 53-րդ պարագրաֆի 2-րդ մասը նպատակային սահմանափակման պետք է ենթարկվի, որպեսզի պաշտպանը պարտադրված չլինի բացահայտելու վստահորդին ցուցաբերած իրավաբանական օգնության շրջանակներում արված սեփական հետազոտություններն ու հետևությունները⁸: Նույն վարույթում որպես վկա հանդես եկած պաշտպանը կարող է իր պաշտպանական ճառով սեփական ցուցմունքը գնահատել, քանի որ ի տարբերություն դատախազի նա օբյեկտիվ լինելու պարտականություն չունի⁹:

Այստեղ համեմատության համար նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով, ի թիվս այլոց, արգելված է որպես վկա կանչել և հարցաքննել դատավորին, պաշտպանին, ներկայացուցչին, դատախազին, քննիչին, հետաքննության մարմնի աշխատակցին, դատական նիստի քարտուղարին՝ կապված այն քրեական գործի հետ, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները: Համանման կարգավորում է տրված նաև քրեական դատավարության օրենսգրքի նախագծի (Նախագիծ) 57-րդ հոդվածով: Կարծում ենք, որ Հայաստանում այս կատեգորիայի անձանց ցուցմունք տալուց ազատված լինելու հարցը հիմնավորման կարիք ունի, քանի որ պարզ չի, թե ի պաշտպանություն ինչ իրավական արժեքի են նրանք ստանում այդ արտոնությունը: Հանցագործությունների բացահայտման հանրային շահի գերակայությունից ելնելով՝ ցանկալի է ուսումնասիրել այլ երկրների փորձը և Նախագծում առնչվածն նեղացնել ցուցմունք տալու պարտականությունից ազատ անձանց շրջանակը:

Հանցագործությունների բացահայտման հանրային շահի և իր դեմ ցուցմունք չտալու, ինքն իրեն մեղադրելուց ազատ լինելու (nemo tenetur) մարդու հիմնարար իրավունքի հավասարակշռության տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ կարգավիճակով պետք է հարցաքննվի անձն իր համամեղադրյալի վերաբերյալ գործով, երբ առկա է իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ իր գործն առանձնացված է քննվում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին առանձնացված վարույթի դեպքում նախկին համամեղադրյալների հարցաքննության առանձնահատկությանն ի սկզբանե չէր անդրադառնում: 2006 թվականի մայիսի 25-ին «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի¹⁰ 31-րդ հոդվածով նախատեսվեց ապացույցի նոր

⁷ Տե՛ս BGH NStZ 1989, 135

⁸ Տե՛ս Matt, Festschrift fՅr Gunter Widmaier zum 70. Geburtstag, 2008, S. 851, 859; SchՊfer, Festschrift fՅr Ernst-Walter Hanack zum 70. Geburtstag, 1999, S. 77, 89; Beulke, Zeitschrift fՅr das Juristische Studium 2011, 324.

⁹ Տե՛ս Arthur Hartmann, Rolf Schmidt, Strafprozessrecht, Bremen 2015, S.95.

¹⁰ Տե՛ս ՀՀՊՏ 2006.06.28/33(488):

տեսակ՝ տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունք (104-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1 կետ): Ճիշտ է սրանով իրավական բացը որոշակիորեն լրացվեց, սակայն սահմանվեց ոչ թե համամեղադրյալի նկատմամբ իրականացվող առանձին վարույթի շրջանակներում անձին հարցաքննելու հնարավորություն, այլ ստացվեց այնպես, որ յուրաքանչյուր մեղադրյալ իր նկատմամբ իրականացվող վարույթով կհարցաքննվի, իսկ ցուցմունքները կտեղափոխվեն մի վարույթից մյուսը: Սա հարցի լավագույն լուծումը չէր, քանի որ մի վարույթից մեկ այլ վարույթ ցուցմունքների մեխանիկական տեղափոխումը խիստ խնդրահարույց է¹¹, այն խախտում է ապացույցների անմիջական հավաքման (հետազոտման) սկզբունքը:

Ինչ վերաբերում է իր նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պարագային, ապա այս դեպքում քրեական դատավարության օրենսգիրքը (հոդված 215) սահմանում է, որ իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքների շուրջ անձի հարցաքննությունը կատարվում է մեղադրյալի հարցաքննության կանոններով: Այս հարցը կարգավորված է Նախագծի 225-րդ հոդվածի 6-րդ մասով, ըստ որում, սահմանված է, որ այն դեպքում, երբ վկան տվյալ վարույթին առնչվող մեկ այլ վարույթում մեղադրյալ է կամ նրա նկատմամբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, ապա այդ վկայի հարցաքննությունը կատարվում է մեղադրյալի հարցաքննության կանոններով: Ինչպես տեսնում ենք, Նախագծով էլ այս դեպքում անձը հարցաքննվում է մեղադրյալի հարցաքննության կանոններով՝ ունենալով լռելու իրավունք: Թե որքանով է նման կարգավորումն արդարացված, կանդրադառնանք ստորև՝ այդ հարցի վերաբերյալ Գերմանիայում առկա իրավական դիրքորոշումները ներկայացնելուց հետո:

Թեև Նախագիծը մեկ քայլ առաջ է գնացել

և բացի դատապարտյալի հարցաքննության կարգից սահմանել նաև առանձնացված կամ ի սկզբանե առանձին վարույթով մեղադրյալի հարցաքննության կարգը, սակայն Նախագծում կիրառված «տվյալ վարույթին առնչվող մեկ այլ վարույթ» արտահայտությունը լայն իմաստ ունի և ըստ այդմ պրակտիկայում խնդրահարույց կարող է լինել, քանի որ որևէ վարույթի մեկ այլ վարույթին առնչվելու վերաբերյալ դատավարության մասնակիցները կարող են ունենալ չհամընկնող կարծիքներ: Դրանից խուսափելու համար, կարծում ենք, որ Նախագծում նախընտրելի է խոսել համամեղադրյալի նկատմամբ քննվող առանձին վարույթով անձին հարցաքննելու կարգի մասին:

Այս հարցի հետ կապված Գերմանիայի դատական պրակտիկան, ինչպես նաև դատավարագետների մի մասը կողմնակից են, այսպես կոչված, ձևական համամեղադրյալի հասկացությանը, ըստ որի միայն նույն վարույթի շրջանակներում կարող է համամեղադրյալ լինել: Վարույթների առանձնացման դեպքում համամեղադրյալի կարգավիճակը դադարում է և անձը կարող է հարցաքննվել որպես վկա¹²: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Գերմանիայի դատական պրակտիկան այս ընդհանուր դիրքորոշումից տարբերակված մոտեցում ունի վարույթների ժամանակավոր առանձնացման դեպքի համար: Ըստ այս տարբերակված մոտեցման՝ այն դեպքում, երբ ժամանակավոր առանձնացված վարույթով մեղադրյալ, իսկ մեկ այլ գործով վկա հանդիսացող անձը հարցաքննվում է այնպիսի հանգամանքների մասին, որոնք կապված չեն համատեղ կատարած արարքի հետ, ապա որպես վկա հարցաքննությունը թույլատրելի է, իսկ համատեղ կատարած արարքի վերաբերյալ որպես վկա հարցաքննությունը, չնայած վարույթների առանձնացմանը, անթույլատրելի է¹³, քանի որ որպես վկա անձը պարտավորված կլինի ցուցմունք տալ, իսկ վարույթների վերամիավորման դեպքում այն կօգտագործվի իր դեմ:

Դատավարագետների մյուս մասը նյութա-

¹¹ Տե՛ս Կարեն Սարուխանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման 30-34 կետերը, «ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 3-րդ հատոր», Երևան 2012, էջեր 137-138:

¹² Տե՛ս BGH StV 1984, 361; Uwe Hellmann, Strafprozessrecht, 2. A. 2006, Rn. 720, Heidelberger Kommentar zur Strafprozessordnung, 5. A. 2012, Vor 48, Rn 8, Beulke, Strafprozessrecht, p. 125.

¹³ Տե՛ս BGHSt, հատոր 24, էջ 257:

կան մոտեցման կողմնակիցն է: Վերջիններս այնպես են, որ թեպետ առանձնացված վարույթում անձը չունի մեղադրյալի ձևական կարգավիճակ, այդուհանդերձ նա չի կարող լավել որպես վկա¹⁴: Այս հարցի առնչությամբ կա նաև մեկ այլ տեսակետ, որի կողմնակից է պրոֆեսոր Վերներ Բոյլկեն: Նա հանդես է գալիս ձևական և նյութական ծայրահեղ մոտեցումների հավասարակշռման դիրքից և գտնում է, որ նախկին համամեղադրյալը կարող է որպես վկա հարցաքննվել միայն այն դեպքում, երբ նրա նկատմամբ առանձնացված վարույթն արդեն ավարտված է (դատավճռի արձակմամբ կամ վարույթի վերջնական կարճմամբ), քանի որ այդ դեպքում ցուցմունքն իր նկատմամբ այլևս իրավական հետևանք չի առաջացնի¹⁵:

Կարծում ենք, որ պրոֆեսոր Բոյլկեի տեսակետն արդարացի է, քանի որ իր գործով վկա չլինելու և իր դեմ ցուցմունք չտալու հանրահայտ իրավական սկզբունքները գործում են դատավարության ընթացքում, դատավարական երաշխիքներ են, որոնց անհրաժեշտությունը վերանում է վարույթն ավարտող վերջնական որոշման իրավական ուժ ստանալու պահից: Այդ պահից վերանում է ինքն իրեն մեղադրելուց ազատ լինելու սկզբունքի խախտման վտանգը և մնում է միայն հանցագործությունների բացահայտման հանրային շահը: Ուստի գտնում ենք, որ այս հարցի վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և Նախագիծը, դատապարտյալի հարցաքննության համար կիրառելի սահմանելով ոչ թե վկայի, այլ մեղադրյալի հարցաքննության կանոնները, արդարացի չեն հավասարակշռում հանրային և մասնավոր շահերը: Ուստի Նախագծի կարգավորումները պետք է տալ այնպես, որ արդեն դատապարտված անձն իր համամեղադրյալի գործով հարցաքննվի որպես վկա՝ վկայի հարցաքննության կանոններով, այսինքն՝ պարտավորված լինի ճշմարտացի ցուցմունք տալու և չունենա լռելու իրավունք:

Վերը քննարկվածի համատեքստում վիճելի է նաև Նախագծի 334-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված միանշանակ կանոնը, ըստ

որի, եթե տուժողն ունի նաև մեղադրյալի կարգավիճակ, ապա նա հարցաքննվում է մեղադրյալի հարցաքննության կանոններով: Այս հարցը, կարծում ենք, առավել մանրամասն կարգավորման կարիք ունի, քանի որ նման ընդհանուր մոտեցում ցուցաբերելը ճիշտ չէ:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյոք համամեղադրյալներից մեկի մերձավոր ազգականն իրավունք ունի հրաժարվել մյուս մեղադրյալի դեմ ցուցմունք տալուց, եթե վերջինիս նկատմամբ վարույթն առանձնացված է քննվում, բայց մեղադրանքի հիմքն այն նույն արարքն է, որը համատեղ է կատարվել: Արդյոք տեղին չի լինի այս անձի մտավախությունը, որ իր ցուցմունքը կանդրադառնա նաև իր մերձավոր ազգականի նկատմամբ տարվող վարույթի վրա: Եվ արդյոք իրավաչափ չէ, որ նա այս վարույթով էլ ազատված լինի ցուցմունք տալու պարտականությունից այնքան ժամանակ, մինչև որ իր մերձավոր ազգականի նկատմամբ վարույթը կավարտվի և իր տված ցուցմունքի հիման վրա այլևս վերաբացման ենթակա չի լինի: Այս հարցը, սակայն, ավելի շատ վերաբերում է ապացույցների թույլատրելիության խնդրին, ուստի այստեղ դրան առավել մանրամասն չենք անդրադառնա:

բ) փորձագիտական ապացույց

Փորձագետը տիրապետում է հատուկ գիտելիքների (Sachkunde), որոնք թույլ են տալիս ի հայտ բերել, լիարժեքորեն ընկալել կամ գնահատել ապացուցման ենթակա փաստերը¹⁶: Փորձագետը սովորաբար պատվիրվում է դատարանի կողմից և կոչված է լրացնել դատավորի մոտ հատուկ գիտելիքների պակասը: Այդ պատճառով փորձագետին անվանում են դատարանի օգնական, ուստի՝ դատավորին բացարկելու հիմքերը գործում են նաև փորձագետի համար:

Գերմանիայի քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ եթե դատավորն անհրաժեշտ համարի, ապա նա իրավունք ունի ղեկավարելու փորձագետի գործունեությունը (78 StPO), օրինակ՝ սահմանելով փորձաքննության ժամկետը, սակայն հետազոտության մաս-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 92 2016

¹⁴ Stf Claus Roxin/Bernd Schönmemann, Strafverfahrensrecht, 27. A., C.H.Beck 2012, 12 Rn 5.

¹⁵ Stf Beulke, Strafprozessrecht, S. 125.

¹⁶ Stf Klaus Geppert, Der Grundsatz der Unmittelbarkeit im deutschen Strafverfahren, Berlin, New York 1979, S. 250; Beulke, Strafprozessrecht, S. 133.

նագիտորեն իրականացումը փորձագետի բացառիկ լիազորությունն է, դատարանը իրավասու չէ մասնագիտական ցուցումներ տալ փորձագետին¹⁷:

Փորձագետի խնդիրը հետևյալն է՝ պարզել, ի հայտ բերել որոշակի փաստեր, հաղորդել փորձից դուրս բերված օրինաչափությունների (Erfahrungsstze) վերաբերյալ տեղեկություններ (օրինակ՝ մարդու մարմնի վրա որոշակի նյութերի ազդեցության գործման կանոնները), որոշակի փաստերից ելնելով անել հետևություններ և կանխատեսումներ կամ գնահատել որոշակի փաստական հանգամանք¹⁸:

Այն փաստերը, որոնք բացառապես հատուկ գիտելիքի կիրառման արդյունքում են ի հայտ բերվում, կոչվում են հետազոտությամբ ստացված փաստեր (Befundtatsachen) և տարբերվում են լրացուցիչ փաստերից (Zusatztatsachen), որոնք թեև փորձաքննության ընթացքում են ի հայտ գալիս, սակայն դրանց ստացման համար հատուկ գիտելիքներ չեն պահանջվում, օրինակ՝ փորձաքննության ընթացքում դատահոգեբանի վարած զրույցի ժամանակ նրան հայտնի դարձած տեղեկությունները: Լրացուցիչ փաստերը չեն հանդիսանում փորձագիտական ապացույց և որպես վկայություն են ներմուծվում դատավարության: Այսպես, վերը բերված օրինակի դեպքում դատահոգեբանը որպես վկա ցուցմունք կտա իրեն հայտնի դարձած տեղեկությունների մասին:

Գերմանիայում առկա է փորձագետ-վկայի հասկացությունը: Վերջինս այն անձն է, ում ընկալածը պայմանավորված է իր հատուկ գիտելիքներով, օրինակ՝ դեպքի վայրում պատահականորեն հայտնված դատաբժիշկը դատական քննության ժամանակ նկարագրում է տուժողի վնասվածքները: Այս դեպքում թեպետ անձը դատարանին հաղորդող տեղեկատվությունը շնորհիվ հատուկ գիտելիքներ է ընկալել, սակայն չունենալով փորձաքննություն կատարելու հանձնարարություն, նա կհարցաքննվի որպես վկա և ոչ որպես փորձագետ:

Դատական քննության բանավորության և անձնական ապացույցների առաջնահերթու-

թյան սկզբունքները պահանջում են, որ գերմանական դատարաններում փորձագետը որպես կանոն բանավոր ներկայացնի իր եզրակացությունը: Փորձագետի կողմից եզրակացության ներկայացման փոխարեն դատական նիստը նախագահողի կողմից գրավոր փորձագիտական եզրակացության հրապարակավ ընթերցումը թույլատրելի է միայն օրենքով նախատեսված դեպքերում¹⁹:

Փորձագետի եզրակացությունը դատարանը գնահատում է ապացույցների ազատ գնահատման սկզբունքի շրջանակներում: Ըստ Գերմանիայի դաշնային դատարանի դիրքորոշման՝ փորձագետի եզրակացության «ավտոմատ» ընդունում չի թույլատրվում, այլ դատարանը պետք է փորձագետի միջոցով գործի փաստական հանգամանքների մասին լիակատար իրազեկություն ձեռք բերի և սեփական պատասխանատվությամբ որոշում ընդունի²⁰:

«Ը դատական պրակտիկայում եղել է դեպք, երբ արտասահմանում կատարված փորձաքննության եզրակացությունը ճանաչվել է այլ փաստաթուղթ, քանի որ այն չի բավարարել փորձագիտական եզրակացության կազմմանն առաջադրվող պահանջին, այն է՝ փորձագետը պետք է զգուշացված լինի ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Այս առնչությամբ կարծում ենք, որ փորձագետի եզրակացությունը որպես այլ փաստաթուղթ դատավարություն ներմուծելն անթույլատրելի է: Դա անձնական ապացույցի արհեստական իրեղենացում է, ինչն էլ անձնական ապացույցների առաջնահերթության սկզբունքի խախտում է: Փորձագիտական ապացույցի անձնական բնույթը ենթադրում է, որ դատարանի պահանջով կամ դատավարության կողմի միջնորդությամբ փորձագետը պետք է կանչվի դատարան իր եզրակացությունը ներկայացնելու և հիմնավորելու համար: Փորձագետի կողմից կատարվելիք ապացուցողական գործողությունները չեն կարող այլ անձի կողմից կատարվել: Այն գործը, որն օրենքով պետք է դատավարության մասնակից համարվող փորձագետի կող-

¹⁷ StEu BGH NStZ 2003, 101.

¹⁸ StEu Arthur Hartmann, Rolf Schmidt, Strafprozessrecht, Bremen 2015, S.96; Beulke, Strafprozessrecht, S. 133.

¹⁹ StEu 256 StPO.

²⁰ StEu BGHSt 7, 238, 239; Beulke, Strafprozessrecht, S. 136.

մից կատարվի, չի կարող արվել մի անձի կողմից, որը չունի այդպիսի կարգավիճակ:

գ) փաստաթղթային ապացույցը

Փաստաթղթային ապացույցը Գերմանիայի քրեական դատավարությունում պետք է բավարարի մտքեր պարունակող ընթերցանելի գրավոր նյութ լինելու պահանջին: Դատավարական փաստաթուղթ տերմինը ավելի նեղ իմաստ ունի, քան դրա նյութաիրավական իմաստն է: Այսպես, այն փաստաթղթերը, որոնք պարունակում են գծագրեր, պատկերներ, սիմվոլներ կամ այլ նշաններ, որոնք ոչ թե ընթերցվում, այլ զննվում են, համարվում են ոչ թե փաստաթղթային, այլ զննելի ապացույց: Եթե դատական քննության համար էական է ոչ թե փաստաթղթում առկա մտքերի բովանդակությունը, այլ գուտ գրավոր տեքստի արտաքին տեսքը, օրինակ՝ ձեռագրերի համեմատության դեպքում, ապա կրկին գործ ունենք ոչ թե փաստաթղթային, այլ զննելի ապացույցի հետ²¹:

Հայաստանի քննչական պրակտիկայում տարածված և քննադատելի մոտեցում է որպես քննչական գործողություն ընթերցանելի փաստաթղթերի զննում իրականացնելը: Խոսքն առավելապես վերաբերում է հեռախոսային հաղորդակցության տվյալներ պարունակող փաստաթղթերի զննությանը: Քննիչները ընթերցանելի մասնակցությամբ կազմակերպում են հեռահաղորդակցության օպերատորներից ստացված, այսպես կոչված, «վերծանումների» զննում, որի արդյունքում ստեղծում են սուրոգատ ապացույց՝ զննության արձանագրություն, այն դեպքում, երբ փաստաթղթային օրիգինալ ապացույցը ևս գտնվում է գործի նյութերում: Նույն սխալն առկա է նաև տեսաձայնագրությունների զննության կատարման դեպքում: Սա ոչ միայն ավելորդ աշխատանք է, այլև իրավական նշանակություն ունի, քանի որ դատական քննության ընթացքում առաջնային ապացույցների փոխարեն սուրոգատ ապացույցների հետազոտումը խախտում է ապացույցների անմիջական հավաքման (հետազոտման) սկզբունքը:

Փաստաթղթային ապացույցները որպես կանոն պետք է հրապարակվեն դատական քննության ժամանակ, սակայն Գերմանիայի քրեական դատավարության կանոնակարգը թույլ է տալիս դրանք չհրապարակել, եթե դատավորները և ատենակալները (Schöffe) ծանոթ են փաստաթղթի բառացի տեքստին, և այդպիսի հնարավորություն են ունեցել նաև դատավարության մնացած մասնակիցները (կետ 249, 2-րդ պարբերություն StPO):

Նախագիծը փաստաթղթային ապացույցի երկու տեսակ է նախատեսում՝ վարույթային գործողությունների արձանագրությունները և արտավարության փաստաթղթերը: Վարույթային գործողությունների արձանագրությունները պետք է նախատեսված լինեն օրենքով: Եթե վարույթի ընթացքում կազմված որևէ փաստաթուղթ նախատեսված չէ օրենքով, ապա այն չի կարող դիտվել ապացույց (հոդված 95): Գերմանիայում կարգավորման հակառակ մոտեցումն է ընդունված՝ որպես ապացույց թույլատրելի են բոլոր այն փաստաթղթերը, որոնք հատկապես արգելված չեն օրենքով: Նախագիծ՝ նման խիստ կարգ սահմանելը ողջունելի է, սակայն կարող է խնդրահարույց լինել, քանի որ այդ դեպքում, օրինակ՝ որպես ապացույց չի կարող ճանաչվել դատարանի առջև ցուցմունք տալու հնարավորությունից զրկված վկայի գրավոր հայտարարությունն ուղղված դատարանին:

դ) զննելի ապացույցը (Augenscheinsbeweis)

Չննելի ապացույցը ստացվում է անձանց կամ իրերին զգայական ընկալելու՝ տեսնելու, լսելու, շոշափելու, համտեսելու կամ հոտոտելու միջոցով²²: Ապացուցման այս միջոցին են պատկանում դեպքի վայրի կամ իրերի զննությունը, լուսանկարների կամ տեսագրությունների դիտումը²³: Դեպքի վայրն ինքնին հանդիսանում է զննելի (իրեղեն) ապացույց: Գերմանիայի դատական պրակտիկայում իշխող կարծիքի համաձայն ձայնագրության ունկնդրումը նույնպես պետք է գնահատել որպես զննության արդյունքում ստացված ապացույց²⁴:

²¹ Տե՛ս BGH StV 1999, 359.

²² Տե՛ս BGHSt 18, 51, 53; Beulke, Strafprozessrecht, S. 137.

²³ Տե՛ս N. B. Վկայի հարցաքննության տեսաձայնագրությունը, որը պետք է փոխարինի դատական քննության փուլում նրա հարցաքննությանը, հետազոտվում է փաստաթղթային ապացույցների (հարցաքննության արձանագրության) հետազոտման կանոններով (255a StPO):

²⁴ Տե՛ս BGHSt 14, 339.

Հայաստանում միասնական մոտեցում չկա լուսանկարների, տեսագրությունների և ձայնագրությունների վերաբերյալ: Քրեադատավարական պրակտիկայում դրանք ճանաչվում են որպես այլ փաստաթուղթ: Նախագիծը նույնպես այս ուղղությամբ է գնացել՝ դրանք դասելով արտավարության փաստաթղթերի թվին (հոդված 96): Քաղաքացիական և վարչական դատավարություններում ապացույցների դասակարգմանն առավել ճիշտ մոտեցում է ցուցաբերված: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ և վարչական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածների համաձայն լուսանկարները, տեսաձայնագրություններն ու ձայնագրությունները դասվում են իրեղեն ապացույցների շարքին: Այդուհանդերձ քաղաքացիական դատավարագիտության մեջ առաջարկվել է լուսանկարները, տեսաձայնագրությունները և ձայնագրություններն առանձնացնել իրեղեն ապացույցներից և դիտարկել որպես առանձին ապացույցման միջոց: Այս առաջարկը հիմնավորվում է նրանով, որ լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները ունեն և՛ իրեղեն, և՛ անձնական ապացույցներին բնորոշ տարրեր և առանց տեխնիկական միջոցների կիրառման հնարավոր չէ դրանք զննել²⁵:

Այս առումով նկատենք, որ լուսանկարը, տեսագրությունը և ձայնագրությունը ցանկացած այլ իրեղեն ապացույցի նման մարդու կողմից ընկալվում է զգայական ճանապարհով: Այսինքն, լուսանկարը, տեսագրությունը կամ ձայնագրությունը դատավորի զգայարանների վրա գրեթե նույն կերպ է ազդում, ինչ դրանում արտացոլված իրեղեն ապացույցը և հաճախ ստեղծում է ճիշտ այն մտապատկերը, որը դատավորը սեփական աչքով իրեղեն ապացույցը տեսած կամ ձայնագրության խոսակցությունն անձամբ լսած լինելու դեպքում կունենար: Ուստի կարծում ենք, որ լուսանկարները, տեսագրությունները և ձայնագրությունները պետք է դիտարկել որպես զննելի (իրեղեն) ապացույց: Լու-

սանկարները, տեսագրություններն ու ձայնագրություններն իրեղեն ապացույց, թե այլ փաստաթուղթ դիտարկելու տարակարծությունները, կարծում ենք, հիմնականում կապված են դրանց ոչ շոշափելի, ոչ իրեղեն լինելու մասին ինտուիտիվ պատկերացման հետ: Ուստի նաև այդ պատճառով նպատակահարմար է Նախագծում «իրեղեն ապացույցի» փոխարեն կիրառել «զննելի ապացույց» տերմինը:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք, ապա քրեական դատավարությունում ապացույցները դասակարգվում են չորս տեսակի՝ գումարած մեղադրյալի ցուցմունքը, մասնավորապես՝

1. վկայություն կամ վկայի ցուցմունք՝ բացի մեղադրյալից ցանկացած այլ անձի մտքերի շարադրանքը վարույթն իրականացնող մարմնի առջև,

2. փորձագիտական ապացույց՝ հատուկ գիտելիքների և հմտությունների կիրառմամբ ստացված տեղեկատվություն,

3. փաստաթղթային ապացույց՝ մտքեր պարունակող ընթերցանելի գրավոր նյութ,

4. զննելի ապացույց՝ զգայական ընկալման օբյեկտ հանդիսացող անձ կամ իր:

Մեղադրյալի ցուցմունքը և հատկապես դրա խոստովանական մասը նեղ իմաստով ապացույց չդիտարկելու հիմքերը հասնում են ուշ միջնադար, երբ քրեական դատավարությունը գլխավորապես ինկվիզիցիոն բնույթ էր կրում²⁶, որտեղ մեղադրյալի խոստովանությունը կորզելու համար թույլատրելի էին կտտանքները:

Ապացույցների երբեմնի թագուհին համարվող մեղադրյալի խոստովանությունը գերմանական երկրներում կորցրեց իր կարևորությունը լուսավորչական դարաշրջանում, երբ կտտանքը որպես ճշմարտությունը բացահայտելու օրինական միջոց հետզհետե վերացվեց, երբ վերջնականապես իր ազդեցությունը կորցրեց Սրբազան Հռոմեական կայսրության Կարլ 5-րդ կայսեր 1532 թվականին ընդունած պատժի դատավարական կարգը՝ Կարոլինյան (Constitutio Criminalis Carolina):

²⁵ Տե՛ս Արա Զոհրաբյան, «Ապացույցման միջոցների հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում», թեմայով գիտական ատենախոսության սեղմագիր, Երևան 2013, էջեր 9, 16 և 17:

²⁶ Տե՛ս RSping/Jerouschek, Grundriss der Strafrechtsgeschichte, Rn. 104; GmSbr/Roth, Grundriss der deutschen Rechtsgeschichte, Rn. 329, Anja Hofmann, Personenidentifizierung durch Zeugen im Strafverfahren, Berlin 2013, S. 25.

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ԴԱՏԱԽԱՉԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
(ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ) ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Մինչև 2007 թվականը դատախազությունը քրեական գործի քննությունն իրականացնելու, հետևաբար, քննչական գործողություններն ախտաճեղմելու ու կատարելու լիազորություն ուներ: Այսինքն, մեկ մարմնի ձեռքում էին կենտրոնացված քրեական գործը քննելու, դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ու դատարանում մեղադրանք պաշտպանելու գործառնությունները: Մյուս կողմից, եթե մի մարմին միաժամանակ լինում է հսկողության օբյեկտ ու սուբյեկտ, բնական է՝ չի կարող արդյունավետ ու օբյեկտիվ հսկողություն իրականացնել իր գործունեության նկատմամբ: Նաև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում դատախազությանը վերապահվեց ոչ թե քրեական հետապնդում իրականացնելու, այլ հարուցելու՝ լիազորություն, մինչդեռ, քրեական գործի քննությունն իրականացնելու լիազորությունը նախատեսված էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգրք), այսինքն՝ փաստացի առկա էր հակասահմանադրական իրավիճակ: 2007 թվականին Օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում հանվեցին դատախազի՝ քրեական գործի քննություն իրականացնելու և քննչական գործողություններին մասնակցելու լիազորությունները և թողնվեց միայն քրեական գործի նախնական

քննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառնություն:

Քրեական գործի հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը դատախազի սահմանադրական գործառնությունն ու պարտականությունն է, և դատախազական հսկողությունն ասելով՝ հասկանում ենք լիազորված դատախազի՝ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում իրականացվող, իրավանորմերով կարգավորվող հատուկ գործունեություն, որն ուղղված է նախնական քննության ընթացքում օրինականության ապահովմանը: Այստեղ դատախազական հսկողությունը լուծում է երկու խնդիր, մասնավորապես, նախ՝ ապահովում է Սահմանադրության գերակայությունը և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, երկրորդ՝ իրականացնում է հսկողություն քրեադատավարական օրենքի պահանջների ճիշտ կիրառման նկատմամբ: Սրանք թույլ են տալիս արդյունավետ իրականացնել նախնական քննությունը²: Վերոնշյալ խնդիրները լուծելու համար հսկող դատախազն իրականացնում է քրեադատավարական օրենքով ամրագրված իր լիազորությունները:

Հսկողություն իրականացնելիս դատախազի լիազորությունները կարելի է բաժանել երեք խմբի³.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 92 2016

¹ Այստեղ պետք է անդրադառնալ դատախազի՝ քրեական հետապնդում հարուցելու լիազորությանը բովանդակային առումով: Այսպես, ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի՝ քրեական հետապնդման հարուցում է համարվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը: Սակայն նշված որոշումներից ոչ մեկը չի կայացվում դատախազի կողմից, այսինքն՝ նորմը ֆորմալ առումով նախատեսում է, որ քրեական հետապնդում հարուցելը դատախազի բացառիկ լիազորությունն է, սակայն գործնականում այն չի իրացվում դատախազի կողմից:

² Տե՛ս Поляков М. П., Федулов А. Ф., “Прокурорский надзор 3-е изд., испр. и доп.” - М.: Высшее образование, 2009, с. 165.

³ Տե՛ս http://bookwu.net/book_prokurorskiy-nadzor_805/38_4.-polnomochiya-prokurora-pri-osushhestvlenii-nadzora (28.07.2015):

1. քրեադատավարական օրենքի խախտումները կանխող (օրինակ՝ ստուգման համար քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում),

2. օրենքի խախտումները հայտնաբերող (օրինակ՝ քրեական վարույթի մասնակիցների բողոքները քննարկել),

3. օրենքի խախտումները վերացնող (օրինակ՝ վերացնել քննիչի՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, ինչպես նաև նրա այլ որոշումներ՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում):

Քրեադատավարական օրենքի խախտումները կանխելուն, հայտնաբերելուն ու վերացնելուն ուղղված դատախազի հսկողական լիազորությունների շարքում քննչական գործողություններին մասնակցելու վերջինիս լիազորության հարցը վիճելի է: Դրա կարևորությունը ընգծվում է հատկապես քրեադատավարական իրավունքի բարեփոխումների ներկա փուլում: Նախագծով առաջարկվում են հայեցակարգային փոփոխություններ, մասնավորապես, սահմանվում է, որ հսկող դատախազն իրավասու է սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ մասնակցել մեղադրյալի հարցաքննությանը⁴: Այսինքն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը ընդամենը մեկ քննչական գործողության կարող է մասնակցել, ինչը, գտնում ենք, որ բավարար չէ արդյունավետ հսկողություն իրականացնելու համար, հետևաբար՝ պետք է ընդլայնել այդպիսի գործողությունների շարքը:

Հետևաբար, դատախազի կողմից քրեական գործի հետաքննության ու նախաքննության⁵ օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ հսկող դատախազի՝ քննչական գործողություններին մասնակցելու լիազորության հիմնախնդրին:

Մեր կարծիքով, քննչական գործողություններին մասնակցելու դեպքում դատախազի՝ երեք խումբ լիազորություններն իրականացվում են միաժամանակ. քննչական գործողություններին մասնակցելիս դատախազը ն կարող է կանխել հնարավոր խախտումները, ն հայտնաբերել ու վերացնել թույլ տրված խախտումները: Փաստորեն, ստացվում է, որ այս լիազորությամբ դատախազը կարող է արդյունավետ ու իրական հսկողություն իրականացնել նախնական քննության օրինականության նկատմամբ:

Քրեական դատավարության իրավունքի տեսությունում մոտեցում կա, ըստ որի՝ պետք է տարբերել քննչական գործողություններին դատախազի ներգրավվածության նպատակային ուղղվածությունը: Դատախազի մասնակցությունը քննչական գործողություններին կարող է արտահայտվել հետևյալ ձևերով.

- ներկա գտնվել քննչական գործողությունների կատարմանը,
- անմիջականորեն մասնակցել քննչական գործողությունների կատարմանը⁶:

Այս հարցը ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն ունի, հետևաբար, մեր կարծիքով, իմաստային և բովանդակային առումով պետք է տարանջատել «ներկա գտնվել» և «մասնակցել» արտահայտությունները: Երբ դատախազը ներկա է գտնվում քննչական գործողությունների կատարմանը, նա չի կարող միջամտել գործընթացին կամ

⁴ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ file:///C:/Users/ASUS/Downloads/Naxagcic-16.05.2014-dr.pdf (25.07.2015):

⁵ Նշենք, որ, ըստ գործող քրեադատավարական օրենսդրության, դատախազական հսկողության շրջանակներում չի գտնվում քրեական գործ հարուցելու փուլը: Նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) փորձ է արվել լուծել այս խնդիրը, մասնավորապես՝ նոր մոդելի համաձայն՝ չենք ունենում քրեական գործ հարուցելու (նյութերի նախապատրաստման) փուլը, քանի որ միանգամից ունենում ենք նախաքննություն, այսինքն՝ քննիչը հանցագործության մասին հաղորդումը ստուգելու համար կատարում է անհրաժեշտ բոլոր քննչական ու դատավարական գործողությունները՝ առանց որևէ սահմանափակման: Ի դեպ, Նախագիծով հետաքննությունը ընկալվում է նորովի, և այն ընթանում է նախաքննությանը զուգահեռ՝ ներառելով միայն օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Հետևաբար, դատախազը հնարավորություն է ունենում արդյունավետ իրականացնել դատախազական հսկողությունը կատարվող բոլոր քննչական ու դատավարական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկատմամբ:

⁶ Տե՛ս Исаенко В., “Следственные действия и полномочия прокурора по надзору за ними”, Закон, 2010, ст. 7-8.

ինչ-որ եղանակով ազդեցություն ունենալ դրավրա (օրինակ՝ դադարեցնել քննչական գործողության կատարումը): Նույնիսկ միջամտություն կատարելու հիմքի առկայության դեպքում դատախազը պետք է պասիվ վարքագիծ ցուցաբերի: Երբ դատախազը մասնակցում է քննչական գործողությունների կատարմանը, նա կարող է որոշակի ազդեցություն ունենալ գործընթացի վրա, հետևաբար, քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է միջամտել գործընթացին, այսինքն՝ այս պարագայում դատախազն ակտիվ դերակատարություն ունի քննչական գործողության ողջ ընթացքում: Մեզ համար ընդունելի է դատախազի՝ քննչական գործողություններին անմիջականորեն մասնակցելու տարբերակը, որովհետև այս դեպքում դատախազական հսկողությունը արտահայտվում է թե՛ ձևական, թե՛ բովանդակային առումով: Դժվար կլինի դատախազական հսկողությունը արդյունավետ համարել, երբ հսկող դատախազը քննչական գործողությանը միջամտելու ոչ մի իրավական գործիք չունի. ձևական կողմը կապահովենք՝ առանց բովանդակային և առարկայական արդյունք ստանալու:

Դատախազը պետք է օրենքով նախատեսված հնարավորություն ունենա ընդհատելու կամ դադարեցնելու քննչական գործողությունը⁷: Օրինակ՝ քննիչը մեղադրյալի հարցաքննության ընթացքում խաբեությամբ փորձում է ինքնախոստովանական ցուցմունք կորզել կամ առերեսման ժամանակ կասկածյալին, մեղադրյալին ուղղված բոլոր հարցերին պատասխանելու համար պաշտպանը կոնֆիդենցիալ խորհրդակցություն է պահանջում, ինչն առերեսման ժամանակ արգելված է:

Կոնկրետ քրեական գործի բնույթից կախված՝ հսկող դատախազի կողմից առանձին

քննչական գործողություններին մասնակցելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Դատախազի մասնակցությունը քննչական գործողություններին մի շարք դեպքերում դատախազական հսկողության արդյունավետ ձևերից է⁸:

«Ետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության այս ձևը ոչ բոլոր դատավարագետներն են ընդունում: Այսպես, Վասիլևը կարծում է, որ հսկող դատախազը չպետք է ակտիվ դերակատարություն ունենա գործի քննության ընթացքում, մասնավորապես, չպետք է մասնակցի քննչական գործողությունների կատարմանը, հակառակ դեպքում, գործ կունենանք ընթացիկ դատախազական հսկողության հետ, իսկ դատախազական հսկողությանը բնորոշ է հետագա լինելը (post factum)⁹:

Գելֆանդի կարծիքով, եթե դատախազը մասնակցի քննչական գործողությունների կատարմանը, կխախտվեն գործի քննության օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունը, որովհետև դատախազն իրենից ներկայացնում է մեղադրանքի կողմ, միևնույն ժամանակ, քննիչը, ըստ էության, չի կարող պատասխանատվություն կրել գործի քննության համար, որովհետև դատախազը կփոխարինի քննիչին¹⁰: Սավիցկին գտնում է, որ քննություն իրականացնող մարմինների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելն անիմաստ է, եթե չկան օպերատիվ ներգործության միջոցներ: Ինչպե՞ս կարող է դատախազն իրական ու արդյունավետ հսկողություն իրականացնել, եթե նա չի մասնակցելու հետաքննությանն ու նախաքննությանը, մասնավորապես, առանձին քննչական գործողությունների կատարմանը¹¹: Դատախազը պետք է ակտիվ դերակատարություն ունենա քրեական վարույթի ողջ ընթացքում¹², այդ իսկ պատճառով, դատախա-

⁷ Տեն Ա. Ղամբարյան, «Մինչդատական վարույթի բարեփոխումները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում», Երևան, «Դատախազության դպրոց», ՊՈԱԿ, 2010, էջ 61:
⁸ Տեն Ա. Ղամբարյան, «Մինչդատական վարույթի բարեփոխումները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում», Երևան, «Դատախազության դպրոց», ՊՈԱԿ, 2010, էջ 59:
⁹ Տեն Васильев А., «Вопросы прокурорского надзора за предварительным следствием и дознанием», «Социалистическая законность», 1953, № 9, ст. 22.
¹⁰ Տեն Гельфанд И. А., «О некоторых вопросах предварительного расследования в общесоюзном уголовно-процессуальном законодательстве». Наукові записки Київського держ. універс., т. VII, вип. II, 1948, ст. 67.
¹¹ Տեն Савицкий В. М., «Процессуальные формы прокурорского надзора за соблюдением законности органами дознания и предварительного следствия», Правоведение, 1958, № 2, ст. 108.
¹² Միացյալ ազգերի՝ հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի հարցերով կոնգրեսի կողմից ընդունված՝ դատախազների դերի վերաբերյալ ուղեցույց, Հավանա, Կուբա, 1990:

զի մասնակցությունը քննչական գործողություններին հնարավորություն է տալիս մշտական, պարբերական ու ակտիվ հսկողություն իրականացնել նախաքննական մարմնի ու քննչական գործողության այլ մասնակիցների (օրինակ՝ պաշտպանի) գործունեության օրինականության նկատմամբ¹³:

Մեր կարծիքով, նախաքննության նկատմամբ իրականացվող հսկողությունը դատախազի ակտիվ գործունեությունն է. նա չի կարող դա իրականացնել միայն գրասենյակային փաստաթղթային եղանակով: Դատախազական հսկողությունը կարող է արդյունավետ իրականացվել, եթե քրեական գործի հարուցման պահից սկսած՝ դատախազն իր հսկողության տակ է պահում քննիչի կողմից առանձին քննչական գործողությունների իրականացումը՝ ուղղակիորեն մասնակցելով դրանց: Չի խախտվում քրեական վարույթի հանրային մասնակիցների, մասնավորապես, քննիչի ու հսկող դատախազի գործառութային տարանջատման սկզբունքը, որովհետև հսկող դատախազն անձամբ չի նախաձեռնում և չի կատարում քննչական գործողություններ, դատախազի կողմից իրականացվող ընթացիկ հսկողության նպատակը քրեական գործով ապացույցներ ձեռք բերելը չէ, այլ նա ուղղակի անմիջականորեն մասնակցում է քննիչի կողմից նախաձեռնվող ու իրականացվող քննչական գործողություններին օրենքի հնարավոր խախտումները կանխելու, ինչպես նաև թույլ տրված խախտումները հայտնաբերելու ու վերացնելու նպատակով, ինչն ինքնին չի ենթադրում նախաքննական մարմնի լիազորությունների իրականացում: Նաև, ընթացիկ հսկողության շրջանակներում հսկող դատախազն անմիջականորեն ընկալում է ապացույցի ստացման աղբյուրը. այլ բան է քննչական գործողության արձանագրություն կարդալը, այլ բան է անմիջականորեն ընկալել օբյեկտիվորեն գոյություն ունեցող փաստերն ու հանգամանքները: Ավելին, սա առավելապես մեծացնում է դատախազական հսկողության արդյունավետությունը, որովհետև դա-

տախազը, վերլուծելով իր՝ անմիջականորեն ընկալած հանգամանքները, կարող է կոնկրետ քննչական գործողություններ կատարելու հանձնարարություններ կամ ցուցումներ տալ քննիչին: Ինչ վերաբերում է գործի քննության օբյեկտիվությանն ու բազմակողմանիությանը, իհարկե, դատախազը մեղադրանքի կողմ է և մեղադրանք է պաշտպանում դատարանում, սակայն դա հիմք չի տալիս պնդելու, որ դատախազի՝ քննչական գործողություններին մասնակցելու դեպքում խախտվում են այդ սկզբունքները: Դատարանում մեղադրանքի պաշտպանությունը դատախազի բացառիկ լիազորությունն է և նա դրա իրականացման համար պատասխանատվություն է կրում, հետևաբար, նա շահագրգռված է նախնական քննության իրականացման օրինականության հարցում, որովհետև միայն այս դեպքում նա կարող է մեղադրանքը պաշտպանել արդյունավետորեն:

Համանման իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը. «Դատախազը պատասխանատու է հետաքննության ու նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար, ինչն էլ իրավական կարևոր նախադրյալ է մեղադրանքը դատարանում արդյունավետ պաշտպանելու համար¹⁴»:

Քրեական գործով ապացույցներ ձեռք բերելու հիմնական եղանակը քննչական գործողություններն են: Սրանք այն գործողություններն են, որոնց արդյունքում քննություն իրականացնող մարմինները հայտնաբերում, ամրագրում և ստուգում են փաստական տվյալները: Քննչական գործողություններից են, օրինակ՝ դեպքի վայրի զննությունը, խուզարկությունը, քննչական փորձարարությունը և այլն¹⁵: Կարելի է եզրակացնել, որ քննչական գործողություններն ուղղված են գործով ապացույցներ ձեռք բերելուն և ձեռք բերված փաստական տվյալների վրա են տարածվում ապացույցների թույլատրելիության ու վերաբերելիության կանոնները: Բացի դրանից, դատախազը նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունն այն-

¹³ Стів Гурин А. Д., «Участие в следственных действиях руководителей следственных органов, прокуроров, должностных лиц органов, осуществляющих оперативно-розыскную деятельность: процессуальные и тактические аспекты». Автореф. дис. ... канд. юрид. наук/ - Воронеж, 2008, ст. 26.

¹⁴ Стів ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ՍԴՈ-1236 որոշումը:

¹⁵ Стів Исаенко В., «Следственные действия и полномочия прокурора по надзору за ними», Закон, 2010, ст. 1-2.

պես պետք է իրականացնի, որպեսզի քննություն իրականացնող մարմինը խստորեն հետևի քրեադատավարական օրենքի պահանջներին քննչական գործողություններն իրականացնելիս: Քրեական գործի ապացուցողական բազան կազմող փաստական տվյալները թե՛ բովանդակային, թե՛ ձևական առումով պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին, հետևաբար, հնարավոր կլինի դրանք քրեական գործի հիմքում դնել որպես թույլատրելի ապացույցներ: Կարծում ենք, որ դատախազի՝ քննչական գործողություններին մասնակցելու լիազորությունը ապացույցների թույլատրելիությունն ապահովելու կարևորագույն միջոցներից մեկն է: Քննչական գործողությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելով՝ դատախազն իրական հնարավորություն է ունենում ազդել նախնական քննության որակի վրա՝ մտցնելով անհրաժեշտ ճշտումներ հետաքննիչի ու քննիչի գործողություններում¹⁶:

Դատախազի հսկողական գործառույթն ապահովում է քննչական գործողությունների որակյալ իրականացումը, քրեադատավարական օրենքի պահանջների կատարումը, որոնցից էլ, մեծ մասամբ, կախված են հանցագործության հաջող քննությունն ու բացահայտումը¹⁷:

Գործնականում դատախազի անմիջական մասնակցության անհրաժեշտություն է առաջանում այնպիսի քննչական գործողության, ինչպիսին է դեպքի վայրի զննությունը: Իրականում օբյեկտիվ անհրաժեշտությունը կա, սակայն օրենսդրական կարգավորումը հետ է մնում: Օրինակ՝ եղել է իրավիճակ, երբ քննիչը դեպքի վայրը զննելիս ընթերականներին չի բացատրել նրանց իրավունքները, հետևաբար, նրանք տվյալ քննչական գործողության արձանագրության բովանդակության վերաբերյալ դիտողություններ ու ճշտումներ անելու հնարավորություն չեն ունեցել. արդյունքում այդ արձանագրությունը ճանաչվել է անթույլատրելի ապացույց, որովհետև այն իրականացվել է քննչական գործողության կարգի էական խախտմամբ:

Ըստ Օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Այս դեպքում կորցրած ապացույցները չենք կարող վերականգնել, որովհետև ինքնին չենք կարող վերականգնել քննչական գործողության կատարման ժամանակ օբյեկտիվորեն գոյություն ունեցող պայմանները, հետևաբար, թունավորված ծառի պտուղների տեսության օրինակով մեկ գործողության՝ օրենքի խախտմամբ կատարելը հանգեցնում է մյուս գործողությունների կատարման անհնարինության: Իհարկե, դատախազի՝ դեպքի վայրի զննությանը մասնակցելու լիազորությունը պետք է օրենսդրական մակարդակով ամրագրել սահմանափակ թվով հանցագործությունների, մասնավորապես՝ ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար (օրինակ՝ սպանություն, ավազակային հարձակում, ծանր մարմնական վնասվածք և այլն) և միջին ծանրության որոշ հանցագործությունների համար (օրինակ՝ խուլիգանություն): Այդպիսի հանցագործությունների դեպքում առանցքային նշանակություն ունեն անհրաժեշտ քննչական գործողությունները ժամանակին կատարելը, դեպքի վայրում առկա հետքերը հայտնաբերելն ու վերցնելը, ապացույցներ ձեռք բերելն ու պատշաճ ամրագրելը:

Մինչդատական վարույթի ողջ ընթացքում դատախազական հսկողության արդյունավետությունն ապահովելու համար դատախազը պետք է ոչ միայն նյութական և վարութային նորմերը գործնականում կիրառելու բավարար գիտելիքներ ու փորձ ունենա, այլև անհրաժեշտ կրիմինալիստիկական պատրաստվածություն¹⁸:

¹⁶ Նշենք, որ Նախագծի կարգավորմամբ՝ հետաքննության մարմնի լիազորությունների շարքից հանվել է քննչական գործողություններ կատարելու լիազորությունը. թողնվել է միայն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելու լիազորությունը, այն էլ՝ բացառապես քննիչի հանձնարարությամբ:

¹⁷ Տե՛ս Семенов В. А., “Прокурорский надзор за производством следственных действий”, “Уголовный процесс”, 2004, ст. 51.

¹⁸ Տե՛ս Исаенко В., “Следственные действия и полномочия прокурора по надзору за ними”, Закон, 2010, ст. 4-5.

Անդրադառնանք նաև դատախազի՝ մեղադրյալի հարցաքննությանը մասնակցելու լիազորությանը: Դատախազի՝ մեղադրյալի հարցաքննությանը մասնակցելու լիազորությունը քննչական գործողությունների իրականացման նկատմամբ հսկողության տարածված ձևերից է: Այն ապահովում է և՛ քննիչի գործողությունների օրինականությունը, և՛ տվյալ քննչական գործողության արդյունավետությունը¹⁹: Դատախազի մասնակցությունը հարցաքննությանը հնարավորություն է տալիս ժամանակին վերհանել ու վերացնել օրենքի խախտումները, ճիշտ գնահատել ձերբակալման, քրեական պատասխանատվության ենթարկելու օրինականությունը²⁰, հետևաբար, մեծացնում է քննիչի պատասխանատվությունը տվյալ քննչական գործողության որակի ու լրիվության համար, ինչպես նաև այն քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի իրացման երաշխիք է²¹:

Գտնում ենք, որ դատախազի մասնակցությունը մեղադրյալի հարցաքննությանը քննչական գործողության արդյունավետ իրականացման և հարցաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունն ապահովելու միջոց է: Բացի դրանից, շատ դեպքերում դատախազը դատարանում մեղադրանք պաշտպանելիս առաջին անգամ է տեսնում մեղադրյալին: Ստացվում է, որ դատախազը մեղադրանք է պաշտպանում առանց հաշվի առնելու մեղադրյալի անձը, ինչը հակասում է պատասխանատվության անհատականացման սկզբունքին: Իսկ այս լիազորությամբ դատախազն իր մեղադրանքն անհատականացնելու փաստացի ու իրական հնարավորություն է ունենում: Դատախազի՝ մեղադրյալի հարցաքննությանը մասնակցելու արդյունավետության պարտադիր պայմանը քրեական գործի նյութերը խորությամբ ուսումնասիրելն է՝ հատկապես ուշադրություն դարձնելով այն ապացույցներին, որոնք վկայում են մեղադրյալի կողմից ենթադրյալ հանցանքը կատարելու փաստը,

ինչպես նաև այն հանգամանքներին, որոնց շուրջ մեղադրյալը պետք է հարցաքննվի:

Կարևոր նախապայմաններից են մեղադրյալի անձը բնութագրող տեղեկություններն ուսումնասիրելը, ինչպես նաև քննիչի հետ խորհրդակցելով՝ բացահայտել մեղադրյալի հոգեբանական առանձնահատկությունները, բարոյականային հատկանիշները և կրթական մակարդակը²²: Նաև պետք է նկատի ունենալ, որ նախաքննության ընթացքում կարող են լինել իրադրություններ, երբ դատախազի մասնակցությունը մեղադրյալի հարցաքննությանը լինի ոչ նպատակահարմար: Այդպիսի դեպքերում հնարավոր է դատախազի մասնակցությունը փոխի քննչական գործողության հոգեբանական մթնոլորտը և խախտի քննիչի ու մեղադրյալի միջև ձևավորված հոգեբանական կապը: Եթե քննիչին հաջողվել է հոգեբանական կապ ստեղծել մեղադրյալի հետ և «համագործակցել» նրա հետ, դատախազը պետք է ձեռնպահ մնա հարցաքննությանը մասնակցելուց:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ մի շարք երկրների քրեական դատավարության օրենսգրքերով հսկող դատախազն օժտված է քննչական գործողություններին մասնակցելու լիազորությամբ: Այսպես, Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված է դատախազի՝ քննչական գործողություններին մասնակցելու լիազորությունը²³: Ինչպես երևում է, Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքը կոնկրետ չի նշում այն քննչական գործողությունների շարքը, որին կարող է մասնակցել հսկող դատախազը, հետևաբար, այստեղ «քննչական գործողություն» արտահայտությունը բավականին լայն իմաստ ունի և դրա մեջ մտնում են մեղադրյալի հարցաքննությունը, քննչական փորձարարությունը, դեպքի վայրի զննությունը, բնակարանի խուզարկությունը և այլն: Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդ-

¹⁹ Տե՛ս Соловьев А.Б., “Прокурорский надзор как важное условие повышения эффективности производства следственных действий”, М., 1982, с. 75.

²⁰ Տե՛ս Ա. Ղամբարյան, «Մինչդատական վարույթի բարեփոխումները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում», Երևան, ՀՀ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, 2010, էջ 59:

²¹ Տե՛ս http://www.pravo.vuzlib.su/book_z243_page_14.html (28.08.2015):

²² Տե՛ս http://www.pravo.vuzlib.su/book_z243_page_14.html (28.08.2015):

²³ Տե՛ս http://pravo.org.ua/files/Criminal%20justice/_09_10_2009.pdf (28.07.2015):

վածի 17-րդ կետի համաձայն՝ դատախազը կարող է մասնակցել ցանկացած գործողության, որն իրականացվում է նախնական քննության ընթացքում: Կարելի է ասել, որ այս կարգավորմամբ դատախազն անսահմանափակ լիազորություն ունի. «ցանկացած գործողություն» արտահայտությունն իր մեջ ներառում է թե՛ քննչական, թե՛ այլ դատավարական գործողությունները: Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատախազը կարող է մասնակցել հետաքննությանն ու նախաքննությանը, նաև անհրաժեշտության դեպքում անձամբ կարող է կատարել քննչական գործողություններ: Նույնաբովանդակ դրույթ նախատեսված է նաև Ուզբեկստանի քրեական դատավարության օրենսգրքով: Այս դեպքում դատախազն ավելի լայն լիազորություն ունի, այսինքն՝ բացի նախնական քննությանը մասնակցելուց, նա կարող է ինքնուրույն նախաձեռնել և կատարել քննչական գործողություններ: Այսպիսով, քրեական գործի հետաքննության ու նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը

դատախազի ակտիվ գործունեությունն է, հետևաբար, նա չպետք է մեկուսացված լինի նախնական քննության ընթացքում կատարվող քննչական գործողություններից:

Դատախազը, մասնակցելով քննչական գործողությունների կատարմանը, իր լիազորություններն իրականացնելու փաստացի ու իրական հնարավորություն է ունենում: Դատախազի մասնակցությունը քննչական գործողություններին նախնական քննության որակի ու արդյունավետության, ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունն ապահովելու միջոց է, որովհետև այս դեպքում դատախազն անմիջականորեն ընկալում է ապացույցի ստացման աղբյուրը, ինչպես նաև իրավական միջոցներ է ունենում քրեադատավարական օրենքի խախտումներն օպերատիվ կերպով հայտնաբերելու, արձանագրելու և վերացնելու համար: Նաև օրենսդրական մակարդակով պետք է ամրագրել հսկող դատախազի լիազորությունները քննչական գործողությունների կատարման ընթացքում: Այդ քայլով կապահովենք քննիչի ու դատախազի լիազորությունների տարանջատման որոշակիությունը:



ՊԱՐԳԵՎ ՍԱՐՈՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
«Սահմանադրական իրավունք» ամբիոնի ասպիրանտ

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունն իր առաջացման հիմքի և պայմանների առումով ունի որոշակի առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է քաղաքացիաիրավական պատասխանատվությունից: Նշված տարբերություններն ընդգծելու նպատակով նպատակահարմար ենք գտնում իրականացնել վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության և քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման հիմքի և պայմանների համեմատական ուսումնասիրություն:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմքը փաստ կամ փաստերի խումբ է, որոնց առկայության պարագայում օրենքի կամ օրենքին չհակասող պայմանագրի ուժով առաջանում է պատասխանատվություն¹:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառումը սուբյեկտիվ իրավունք է: Քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է ծագել միայն այլ անձի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում և միայն այն պարագայում, երբ իրավագործ անձը դիմի իր իրավունքների պաշտպանության այդ եղանակին²:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության ծագման հիմքից բխում է, որ սուբյեկտիվ իրավունքների ցանկացած խախտման համար պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման է դիտվում անձի իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումը: Գ.Ֆ. Շերշենևիչն իրավացիորեն նշում

է, որ վնաս պատճառելուց բխող պարտավորության առաջացման համար միայն օբյեկտիվ իրավունքի խախտումը բավարար չէ, և անհրաժեշտ է նաև սուբյեկտիվ իրավունքի խախտում³: Ե.Լ. Նևզգոդինան նշում է, որ վնասի հատուցման պարտավորությունը ծագում է հենց վնաս պատճառելու փաստից և հենց այն պատճառով, որ խախտվում է տուժողի սեփականության իրավունքը, որի պաշտպանությունը շուկայական հարաբերությունների պայմաններում կարող է իրապես իրականացվել նաև պարտավորաիրավական եղանակներով, մասնավորապես՝ վնասների հատուցմամբ կամ համարժեք գույքի բնեղենով տրամադրմամբ⁴: Նման պայմաններում գտնում ենք, որ չի կարող հիմնավորված համարվել Ա. Կուրբատովի այն տեսակետը, որի համաձայն՝ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման համար բավարար է միայն իրավունքի նորմի խախտումը, և վնասի հատուցման պարտավորությունը կարող է ծագել նաև իրավախախտի կողմից հանրության առջև ունեցած իր պարտավորությունների չկատարման հետևանքով: Որպես իր արտահայտած տեսակետի հիմնավորում՝ Ա. Կուրբատովը որպես օրինակ նշում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով այլ անձի տրանսպորտային միջոցին վնասի պատճառման դեպքը և պնդում, որ այդ դեպքում իրեն պատկանող գույքին պատճառված վնասի հատուցում պահանջելու տուժողի իրավունքը ծագում է ոչ թե նրանից, որ վերջինս ճանա-

¹ Стів Антимонов Б.С., «Основания договорной ответственности социалистических организаций» М., 1962, ст. 28.
² Стів Բարսեղյան Ս.Կ., «Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը», Երևանի պետ. համալսարան, Երևանի համալս. հրատ., Երևան, 2006:
³ Стів Шершеневич Г.Ф., «Учебник русского гражданского права», Казан, 1896, 2-е издание, ст. 528.
⁴ Стів Невзгодина Е.Л., «Вред как условие возникновения деликтных обязательств в гражданском праве», Вестник Омского университета. Серия «Право», 2009. № 3 (20), ст. 29.

պարհային երթևեկության կանոնների պահպանման պահանջի իրավունք ունի, այլ հենց այդ կանոնների խախտման փաստից⁵: Այսպիսով, հեղինակը փորձում է հիմնավորել, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման հիմքն օբյեկտիվ իրավունքի խախտումն է, և, ըստ այդմ, գործողության կամ անգործության հակաիրավականության տակ հենց օբյեկտիվ իրավունքի՝ իրավական նորմի խախտումը պետք է հասկանալ: Սակայն ակնհայտ է, որ ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնների խախտման դեպքում որևէ քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին խոսք չէր լինի՝ առանց այլ անձի գույքային վնաս պատճառելու: Այդ է պատճառը, որ մենք ամբողջովին կիսում ենք այն հեղինակների կարծիքը, որ վնասի հատուցման քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է առաջանալ բացառապես այլ անձի սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտման առկայության պարագայում: Ի տարբերություն քրեական իրավունքի, որտեղ պատասխանատվության առաջացման համար բավարար է ձևական հանցակազմի առկայությունը՝ առանց վնաս պատճառելու, քաղաքացիական իրավունքում առանց վնասի պատճառման չի կարող ծագել պարտավորություն⁶: Քաղաքացիական իրավունքի գաղափարախոսությանը համապատասխան՝ հակաիրավականության տեսանկյունից գնահատման պետք է արժանանա ոչ թե գործողությունը կամ անգործությունը, այլ սուբյեկտիվ իրավունքի խախտումը⁷: Ո՛չ տուժողին, ո՛չ դատարանին չի հետաքրքրում, թե իրավախախտի կոնկրետ որ գործողությունը կամ անգործությունն է դարձել պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառ: Օրենքը նույնպես պատասխանատվության առաջացումը կախման մեջ չի դնում այն հարցից, թե պարտականի կոնկրետ որ գործողությունը կամ անգործությունն է առաջացրել այդ խախտումը:

Օրենքին հետաքրքրում է բուն իրավախախտման փաստը⁸: Ա.Ս. Շևչենկոն նույնպես այն տեսակետն է պաշտպանում, որ վնասի հատուցման քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման համար պահանջվում է ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ իրավունքի խախտում: Այնուհետև հեղինակն ավելացնում է, որ քաղաքացիական իրավունքում սուբյեկտիվ իրավունքների խախտումը հնարավոր է նաև առանց օբյեկտիվ իրավունքի խախտման: Դա տեղի ունի, օրինակ՝ այն քաղաքացիական իրավունքների և պարտականությունների խախտման դեպքում, որոնք բխում են օրենքով չնախատեսված, սակայն օրենքին չհակասող պայմանագրերից: Հետևաբար, ի տարբերություն իրավունքի այլ ճյուղերի, քաղաքացիական իրավունքում սուբյեկտիվ իրավունքների խախտման հիմնավորումը միայն կոնկրետ նորմերի խախտման համատեքստում հնարավոր չէ:

Վկայակոչված տեսակետների ամփոփման արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ օրենքը պատճառված վնասի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացումը կապում է տուժողին վնաս պատճառելու փաստի հետ՝ առանց նշանակություն տալու այն հանգամանքին, թե ինչպիսի բնույթ ունեցող գործողությունը կամ անգործությունն է հանգեցրել այդ վնասի առաջացմանը: Հետևաբար, կարող ենք փաստել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ վնասի առաջացման պատճառ են դառնում առաջին հայացքից օբյեկտիվ իրավունքով չարգելված և, հետևաբար, իրավաչափ գործողությունները, միևնույնն է, անձի համար առաջանում է այդ վնասի հատուցման պարտավորություն: Հետևաբար ինչ-որ առումով քաղաքացիական իրավունքում գործողության կամ անգործության հակաիրավականությունը դրսևորվում է այլ անձի վնաս պատճառելու մեջ: Վնասի պատճառման հանգամանքը դառնում է կատարված գործողության իրավա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 92 2016

⁵ Տե՛ս Курбатов А., “Субсидиарная ответственность руководителей при несостоятельности (банкротстве) возглавляемых ими кредитных организаций” // Хозяйст-во и право. - 2007. - № 7, ст. 7.
⁶ Տե՛ս Невзгодина Е. Л., “Вред как условие возникновения деликтных обязательств в гражданском праве”, Вестник Омского университета. Серия “Право”, 2009. № 3 (20), ст. 28-29.
⁷ Տե՛ս Բարսեղյան Ս. Վ., «Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը», Երևանի պետ. համալսարան, Երևանի համալս. հրատ., Երևան, 2006, էջ 235:
⁸ Տե՛ս Брагинский М. И., Витрянский В. В., “Договорное право: общие положения” М., 1997, ст. 442.

չափության գնահատման չափանիշ, և, ըստ այդմ, վնաս պատճառած բոլոր գործողությունները պետք է համարել հակահրավակական: Իրավաբանական գրականության մեջ այս մոտեցումը հայտնի է գլխավոր դեղիկտ անվանմամբ: Գլխավոր դեղիկտի համակարգի հիմքը ցանկացած վնասի պատճառում հակաօրինական ճանաչելն է: Հատուցման ենթակա վնասի հասկացության մեջ իրավախախտի վնասակար վարքագծի հակահրավակականությունն արդեն իսկ ենթադրվում է: Դա թույլ է տալիս յուրաքանչյուր վնասի պատճառում դիտել որպես քաղաքացիական իրավախախտում, ինչը թույլ կտա խուսափելու այն բոլոր արարքների անհարկի թվարկումից, որոնցով հասցված վնասը ենթակա է հատուցման⁹: Նույն գաղափարն արտացոլված է նաև Օ.Վ. Միխայլենկոյի աշխատություններում: Վերջինս այն կարծիքն է արտահայտում, որ գլխավոր դեղիկտի կանոնը բխում է քաղաքացիական իրավունքին հատուկ դիսպոզիտիվ կարգավորման մեթոդից: Նման պայմաններում, քանի որ հնարավոր չէ օրենսդրորեն սպառիչ կերպով ամրագրել անձի բոլոր հնարավոր սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները, հետևաբար նաև դրանց բոլոր խախտումները, այդ իրավունքների պաշտպանությունը գործուն դարձնելու նպատակով ամրագրվել է դրանց խախտման ընդհանուր արգելք: Ուստի՝ անձին վնասի պատճառումը դիտվում է որպես վերջինիս սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների խախտում, ինչն արգելված է¹⁰:

Գլխավոր դեղիկտի, այսինքն՝ անձին վնասի պատճառման յուրաքանչյուր դեպք իրավախախտում դիտելու կանոնը քաղաքացիական իրավունքի մասնագետները տարածում են նաև պետական մարմինների գործունեության արդյունքում պատճառված վնասի հատուցման պարտավորության վրա: Վերջիններիս նման եզրահանգման գալու հիմք է տալիս այն հանգամանքը, որ նրանք յուրաքանչյուր վնասի հատուցում՝ անկախ նրանից, թե իրավունքի որ ճյուղի նորմերով կարգավորվող գործողության

հետևանքով է այն պատճառվել, դիտարկում են քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը նշված հեղինակները համարում են պետության նկատմամբ քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառում: Նման մոտեցումը վերջիններիս թույլ է տվել առաջ քաշելու պետական մարմինների գործողությունների (անգործության), ինչպես նաև նրանց հրապարակած ակտերի հակահրավակականության կանխավարկածը: Այդ մոտեցումը բացատրվում է նրանով, որ քանի որ քաղաքացիական իրավունքում վնասի պատճառման ցանկացած դեպք համարվում է հակահրավակական, հետևաբար՝ ի սկզբանե որպես հակահրավակական պետք է դիտել նաև վնաս հասցրած պետական մարմինների գործողությունները, անգործությունը կամ ակտերը:

Մենք չենք կիսում այս հեղինակների կարծիքը: Վերջիններիս կողմից հաշվի չի առնվում պետական մարմինների գործունեության հատուկ բնույթը: Ի վերջո, բոլոր պետական մարմինները, իրականացնելով իրենց վերապահված լիազորությունները, իրենց առջև դրված խնդիրներով և իրականացվող գործունեությամբ նպատակաուղղված են պետության գործառույթների իրագործման ապահովմանը: Պետական մարմինների յուրաքանչյուր գործողություն կարող է անձին պոտենցիալ վնաս հասցրնելու սպառնալիք պարունակել, սակայն այդ սպառնալիքը չի կարող հիմք լինել պետական մարմնի համար համապատասխան լիազորության իրականացումից հրաժարվելու համար: Եթե նույնիսկ պետական մարմնի պաշտոնատար անձն ի սկզբանե գիտակցի, որ իր համար պարտադիր կատարման ենթակա գործողությամբ անձին պատճառելու է վնաս, ապա, միևնույն է, նա չի կարող ձեռնպահ մնալ այդ գործողության կատարումից՝ դա պատճառաբանելով անձին հնարավոր վնաս հասցնելու հանգամանքով: Ուստի, ակնհայտ է, որ պե-

⁹ Стів Маковський А. Л., “Гражданская ответственность государства за акты власти // Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика”, Сборник памяти С. А. Хохлова / Отв. ред. А. Л. Маковский. Исследовательский центр частного права, - М.: Международный центр финансово-экономического развития, 1998, ст. 104.

¹⁰ Стів Михайленко О. В., “Имущественная ответственность за вред, причиненный осуществлением публичной власти: теоретические аспекты и проблемы ее реализации на практике”, ст. 61.

տական մարմինների պարագայում վերջիններիս կատարած գործողություններով վնասի պատճառումը չի կարող դիտվել որպես այդ գործողությունների իրավականության գնահատման չափանիշ: Եթե պետական մարմնի այս կամ այն գործողությամբ անձին պատճառվել է վնաս, սակայն տվյալ պետական մարմինը լիազորված է եղել այդ գործողությունը կատարելու և այդ ընթացքում վերջինիս կողմից պահպանվել են այդ գործողության կատարման կանոնները, ապա դրա հակաիրավականության մասին խոսք լինել չի կարող: Վնասի պատճառման փաստն այստեղ երկրորդական նշանակություն է ձեռք բերում: Հարկ է նկատել, որ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի առկայության մասին իրավական դիրքորոշում է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, որի իմաստն այն է, որ յուրաքանչյուր վարչական ակտ համարվում է իրավաչափ և ենթակա է կատարման, քանի դեռ այն օրենքով սահմանված կարգով չի վիճարկվել և անվավեր ճանաչվել¹¹: Վարչական ակտերի և, ընդհանրապես, պետական մարմինների բոլոր գործողությունների (անգործության) իրավաչափության կանխավարկածից ելնելը թելադրված է այն անհրաժեշտությամբ, որ հակառակ մոտեցման պարագայում կասկածի տակ կդրվի ամբողջ պետական գործունեությունը:

Պետական մարմինների գործողությունների իրավաչափության կանխավարկածը նշանակում է, որ պետական մարմինների գործունեությամբ պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություններում քաղաքացիական իրավունքին հատուկ գլխավոր դեյլիկտի կանոնը չի կարող գործել: Ինչպես նշեցինք, գլխավոր դեյլիկտի կանոնը ենթադրում է վնաս պատճառած ցանկացած գործողության հակաիրավականություն, իսկ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածը նշանակում է, որ նույնիսկ վնաս պատճառելու դեպքում իշխանական գործողությունը կամ ակտը

չի կարող համարվել հակաիրավական, եթե այն ընդունվել է սահմանված կանոններին համապատասխան: Այսպիսով, գլխավոր դեյլիկտի կանոնը հանրային իրավունքում բախվում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքին, որին էլ պետք է տրվի առաջնայնությունը:

Հաշվի առնելով, որ իշխանական գործողությունների և ակտերի իրավաչափության կանխավարկածի գործողության պայմաններում հանրային իրավունքի բնագավառում գլխավոր դեյլիկտի կանոնը գործել չի կարող, որոշ հեղինակներ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը քաղաքացիաիրավական պատասխանատվության շրջանակներում դիտարկելը հիմնավորելու նպատակով առաջարկում են պետության՝ վնաս պատճառելուց բխող պատասխանատվության երկակի բնույթի տեսությունը: Այդ տեսության իմաստն այն է, որ պետության՝ վնասի հատուցման պարտավորությունը ենթադրում է պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունների հակաիրավականության երկու տեսակների առկայություն՝ քաղաքացիաիրավական, որը դրսևորվում է հենց վնասի պատճառման մեջ, և վարչաիրավական, որը դրսևորվում է վնաս պատճառած գործողությունը դրա կատարման համար սահմանված կանոնների խախտմամբ կատարված լինելու մեջ¹²: Սակայն այս հարցում պետք է համաձայնել Ա. Լ. Մակովսկու հետ, ով նշում է, որ նմանատիպ դեպքերում պետական մարմնի գործողության երկակի հակաիրավականության պահանջ առաջադրելու հիմքերը բացակայում են, քանի որ եթե վնաս պատճառած գործողությունն իրավաչափ է, ապա դրա «քաղաքացիաիրավական հակաիրավականությունը», այսինքն՝ վնասի պատճառումը, որևէ իրավական նշանակություն չունի¹³: Վնաս պատճառող պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողության հակաիրավականության բնութագիրը, որպես կանոն, քաղա-

¹¹ Տե՛ս, օրինակ՝ ՎԴ2/0278/05/09 վարչական գործով 2010 թվականի հունիսի 25-ի որոշումը կամ ՎԴ/2085/05/12 վարչական գործով 2015 թվականի ապրիլի 30-ի որոշումը:

¹² Տե՛ս Кун А. А., “Противоправность и вина в обязательствах по возмещению вреда, причиненного гражданину актами власти” // Правоведение. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1984, № 3, ст. 91-93.

¹³ Տե՛ս Михайленко О. В., “Имущественная ответственность за вред, причиненный осуществлением публичной власти: теоретические аспекты и проблемы ее реализации на практике”, ст. 62.

քացիական իրավունքի շրջանակներից դուրս է գտնվում¹⁴:

Վարչարարության ոլորտում և քաղաքացիական իրավահարաբերություններում վնասի հատուցման պարտավորության առաջացման վերոհիշյալ տարբերությունը պայմանավորում է նաև վարչարարությամբ վնասի պատճառման մեջ վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի մեղքի վերաբերյալ առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն: Յու.Ն. Անդրեևը վնաս հասցնելու համար պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվության առաջացման պարտադիր պայման է համարում նաև մեղքի առկայությունը և ընդգծում, որ անձը ճանաչվում է անմեղ, եթե վնաս պատճառած գործողությունը կատարելիս դրսևորել է հետևողականության և շրջահայացության պահանջվող մակարդակ¹⁵:

Հեղինակի արտահայտած այս մտքից հետևում է, որ պետական մարմնի համար վնասի հատուցման պարտավորություն կարող է ծագել այն դեպքում, երբ վերջինս վնասի կանխման ուղղությամբ բավարար և անհրաժեշտ հետևողականություն և շրջահայացություն չի դրսևորել: Սակայն հեղինակի հետ չի կարելի համաձայնել այն պատճառաբանությամբ, որ, ինչպես արդեն իսկ պարզ դարձավ, պետական մարմինը կամ դրա պաշտոնատար անձն իր իշխանական լիազորություններն իրականացնելիս այլ անձի վնաս չպատճառելու նպատակով հետևողականության և շրջահայացության հատուկ մակարդակ դրսևորելու խնդիր չունի: Եթե նույնիսկ որևէ իշխանական լիազորություն իրականացնելուց առաջ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի համար պարզ է, որ այդ լիազորության իրականացման արդյունքում անձին պատճառվելու է վնաս, սակայն օրենքը պահանջում է տվյալ լիազորության իրականացումը, վերջինս չի կարող ձեռնպահ մնալ այն իրականացնելուց՝ անձին վնաս չպատճառելու պատճառաբանությամբ: Նման պայմաններում կարելի է պնդել,

որ վնաս չպատճառելու համար անհրաժեշտ հետևողականություն և շրջահայացություն պահանջվում է դրսևորել քաղաքացիական իրավունքի ոլորտում, քանի որ այստեղ յուրաքանչյուր վնասի պատճառում արգելված է: Մինչդեռ հանրային իրավունքի, մասնավորապես՝ պետական գործունեության իրականացման ոլորտում առաջնայինը պետության առջև դրված խնդիրների իրագործումն է, և եթե այդ նպատակով իրականացվող պետական մարմինների գործողությունները համապատասխանում են օրենքի պահանջներին, ապա այդ գործողություններով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վնաս պատճառվելու դեպքում չի կարող խոսք լինել այդ վնասի համար պետության քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին: Ասվածից բխում է, որ վարչարարության իրականացման հետևանքով վնասի առաջացման դեպքում վարչարարությունն իրականացնող անձի մեղքի հարցը պետք է դիտարկել ոչ թե այդ վարչարարության հետևանքների՝ առաջացած վնասների նկատմամբ վերջինիս ունեցած վերաբերմունքի, այլ բուն վարչարարության իրավաչափության կամ ոչ իրավաչափության կապակցությամբ վերջինիս ունեցած վերաբերմունքի համատեքստում: Ասվածը վերաբերում է նրան, որ քաղաքացիաիրավական հարաբերությունների ոլորտում անձն ազատվում է վնասը հատուցելու պարտավորությունից, եթե ապացուցում է, որ այն իր մեղքով չի պատճառվել: Այսինքն՝ քաղաքացիական իրավունքում առավելապես կարևորվում է բուն վնասի պատճառման փաստը, և եթե անձն ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, ապա նա ազատվում է այն հատուցելուց՝ անկախ նրանից, թե իր ինչպիսի գործողությունների հետևանքով է հասցվել վնասը: Հետևաբար, քաղաքացիական իրավունքում առաջնային է համարվում վնասի պատճառման փաստի նկատմամբ անձի վերաբերմունքի հարցը, մինչդեռ վարչարարության ոլորտում այդ նույն մոտեցումը չի կարող գործել: Այստեղ անձը նախապես կարող է իմանալ

¹⁴ Стѣн Маковский А. Л., “Гражданская ответственность государства за акты власти // Гражданский кодекс России. Проблемы. Теория. Практика”, Сборник памяти С. А. Хохлова / Отв. ред. А. Л. Маковский. Исследовательский центр частного права, - М.: Международный центр финансово-экономического развития, 1998, ст. 106.

¹⁵ Стѣн Андреев Ю. Н., “Ответственность государства за причинение вреда: цивилистические аспекты”, ст. 80.

վնաս պատճառելու հնարավորության մասին, ուստի՝ անհրաժեշտ է վերջինիս մեղքը գնահատել ոչ թե վնաս պատճառելու հնարավորության, այլ կատարված գործողության իրավականության կամ հակահրավականության հարցում ունեցած վերաբերմունքից ելնելով: Եթե քաղաքացիաիրավական հարաբերություններում անձը կարող է ապացուցել վնասի պատճառման մեջ իր մեղքի բացակայությունը, ապա, թերևս, հնարավոր չէ պատկերացնել, թե ինչպես վարչարարությունն իրականացրած պետական մարմինը կամ պաշտոնատար անձը կարող է ապացուցել իր մեղքի բացակայությունը վարչարարության ոչ իրավաչափության հարցում: Քաղաքացիական իրավունքում անձը համարվում է անմեղ, եթե ապացուցում է, որ վնասի առաջացումը կանխելու նպատակով ձեռնարկել է իրենից կախված բոլոր քայլերը: Վարչարարության ոլորտում վնասը ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հասցված լինելու դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչպես անձը կարող է ապացուցել իր մեղքի բացակայությունը, այսինքն՝ ինչպես նա կարող է մեղք չունենալ վարչարարությունն օրենքի խախտմամբ իրականացրած լինելու հարցում: Ասվածից հետևում է, որ կատարված իշխանական գործողության ոչ իրավաչափ լինելու բոլոր դեպքերում այն կատարած պետական մարմնի կամ պաշտոնատար անձի մեղքը մշտապես առկա է, քանի որ վերջինս գործնականում չի կարող տվյալ գործողությունը կատարել օրենքի խախտմամբ՝ միևնույն ժամանակ լինելով անմեղ: Օրենքի խախտման բոլոր դեպքերում պաշտոնատար անձի մեղքը ոչ թե ենթադրվում է, այլ մշտապես առկա է: Մինչդեռ քաղաքացիական իրավունքում ինքնին վնասի առաջացումը չի վկայում այն պատճառած անձի մեղավորության մասին: Վերջինս զրկված չէ իր մեղավորությունը ժխտելու հնարավորությունից:

Վարչարարությամբ պատճառված վնասի շրջանակներում վնաս պատճառած գործողության իրավականության գնահատման և անձի մեղքի հետ կապված առանձնահատկությունների բացահայտումից հետո կցանկանայինք որոշակի անդրադարձ կատարել նաև վնաս

պատճառած վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ խնդրին, քանի որ, ի տարբերություն մեղքի, որն այստեղ չունի սկզբունքային նշանակություն, պատճառահետևանքային կապի առկայությունը վնասը հատուցելու պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է: Իրավագիտության մեջ պատճառահետևանքային կապի վերաբերյալ ձևավորվել են տարբեր տեսություններ: Ն.Դ. Եգորովը, օրինակ՝ առաջ է քաշում ուղղակի և անուղղակի կապի տեսությունը: Ըստ նրա՝ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման պայման կարող է դիտվել միայն հակահրավական վարքագծի և առաջացած վնասի միջև ուղղակի, անմիջական պատճառահետևանքային կապը: Ոչ ուղղակի, միջնորդավորված կապն իրավական արժևորում չի ստանում, հետևաբար՝ եթե վնասը հակահրավական վարքագծի միջնորդավորված արդյունք է, ապա չի կարող առաջ գալ պատասխանատվության հարց: Հետաքրքիր է, որ Ն. Դ. Եգորովը որպես պատճառահետևանքային կապն ուղղակի կամ անուղղակի դիտելու չափանիշ դիտում է այն հանգամանքը, թե արդյոք վնասի առաջացմանը նախորդող դեպքերի հաջորդական զարգացման շղթայում հակահրավական վարքագծի և վնասների միջև առկա են այլ փաստեր, որոնց հետ օրենքը կապում է պատասխանատվության առաջացումը, թե՛ ոչ¹⁶:

Ն. Դ. Եգորովի առաջադրած տեսությանն իր հիմնադրույթներով մոտ է Օ.Ս. Իոֆֆեի կողմից առաջարկված հնարավորության և իրականության տեսությունը: Այդ տեսության էությունը հանգում է նրան, որ այս կամ այն հանգամանքի՝ առաջացած վնասակար հետևանքի հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվելը կախված է նրանից, թե այդ հանգամանքը՝ որպես պատճառ, ստեղծում է վնասակար արդյունքի առաջացման վերացական, կոնկրետ հնարավորություն, թե արդյունքը հնարավորությունից դարձնում է իրական: Պատճառական կապ կարող է առկա լինել միայն վերջին երկու դեպքերում: Այն պարագայում, երբ հակահրավական վարքագիծը վնասակար հետևանքի առաջացման միայն վերացական

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 92 2016

¹⁶ Տե՛ս “Гражданское право. Учебник.” Под. Ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. Часть 1. М., 1996, ст. 493.

հնարավորություն է ստեղծում, հետևաբար՝ այն չի կարող համարվել վնասի առաջացման պատճառ¹⁷:

Նշված երկու տեսությունները, ըստ էության, միմյանց չեն հակասում: Ընդհակառակը, մենք այն կարծիքին ենք, որ դրանցից յուրաքանչյուրում արտահայտված գաղափարների համադրումը միայն կարող է թույլ տալ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ճիշտ լուծել պատճառահետևանքային կապի առկայության հարցը: Այդ երկու տեսությունների էության վերլուծությունը մեզ թույլ է տալիս ընդհանուր եզրահանգման գալու առ այն, որ պատճառական կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության տրամաբանական, անխուսափելի և անմիջական արդյունքն է: Այս տեսանկյունից մենք համաձայն ենք իրավագիտության մեջ արտահայտված այն տեսակետին, որ երևույթի առաջացման պատճառն անհրաժեշտ է տարբերել դրա առաջացմանը նպաստող պայմանից: Օրինակ, եթե անձի առողջությանը վնաս է հասցվում, սակայն վերջինս իր աշխատունակությունը կորցնում է նախկինում ունեցած հիվանդության պատճառով, որը գլուխ է բարձրացնում ստացված վնասվածքից, ապա տվյալ դեպքում անձի առողջությանը վնաս պատճառող արարքի կատարումը պետք է դիտել ոչ թե որպես վերջինիս անաշխատունակության առաջացման բուն պատճառ, այլ պայման, որը այլ երևույթների հետ մեկտեղ նպաստել է այդ հետևանքի առաջացմանը¹⁸:

Ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապի էության ըմբռնման և դրա առկայության հարցի ճիշտ գնահատման նպատակով, թերևս, օգտակար կլիներ դատական պրակտիկայից մի քանի գործերի ուսումնասիրումը, որոնցով վնասի հատուցման պահանջը մերժվել է հենց վարչական մարմնի հակաիրավական գործողության և վնասի միջև անմիջական պատճառական կապի բացակայության պատճառաբանությամբ: Մասնավորապես՝ առանձին հե-

տաքրքրություն է ներկայացնում հետևյալ օրինակը. ընկերությունը հայց է ներկայացրել դատարան, որով պահանջել է պետությունից բռնագանձել որոշակի գումար՝ որպես դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ոչ իրավաչափ գործողության հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում: Հայցի հիմքում դրվել էին այն հանգամանքները, որ մեկ այլ դատական ակտով ոչ իրավաչափ է ճանաչվել հարկադիր կատարման ծառայության՝ ընկերության կողմից վարձակալական հիմունքներով օգտագործվող գույքի վրա արգելանք դնելու գործողությունը: Նշված գործողությունն անվավեր ճանաչելը պայմանավորված է եղել նրանով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Կատարողական վարույթի մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքով¹⁹ պարտապանի վարձակալած գույքի արգելադրումը պետք է իրականացվի դատական կարգով, մինչդեռ տվյալ դեպքում հարկադիր կատարողն արգելանք էր կիրառել սեփական որոշմամբ: Հայցվորն իր ներկայացրած հայցը հիմնավորում էր նաև նրանով, որ ոչ իրավաչափ կերպով վարձակալած սարքավորումների վրա արգելանք դնելու հետևանքով վերջինս զրկված է եղել դրանք նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորությունից, ինչի հետևանքով էլ կրել է վնաս՝ բաց թողնված օգուտի տեսքով: Դատարանները մերժել են հայցադիմումն այն հիմնավորմամբ, որ հայցվորի ենթադրյալ կրած վնասի և հարկադիր կատարողի ոչ իրավաչափ գործողության միջև առկա չէ անմիջական պատճառահետևանքային կապ, քանի որ տվյալ դեպքում թույլ է տրվել միայն գույքն արգելանքի տակ վերցնելու ընթացակարգային խախտում, այն է՝ դատական կարգով արգելանք կիրառելու փոխարեն հարկադիր կատարողն այդ գործողությունը կատարել է իր որոշմամբ: Եթե համապատասխան պահանջով հարկադիր կատարողը դիմեր դատարան, ապա նրա պահանջը մերժելու հիմքեր առկա չէին լինի, ուստի ընթացակարգի խախտման հետևանքով արգելանք կիրառելու գործո-

¹⁷ Стѣи Иоффе О. С., “Обязательственное право.” М., 1975, ст. 118-120.
¹⁸ Стѣи “Гражданское право. Том 1, 3-е издание,” отв. ред. Суханов Е. А., Wolters Kluwer, М., 2010, ст. 604-605.
¹⁹ Стѣи «Կատարողական վարույթի մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքը
https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_71450/:

ղությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հայցվոր ընկերության ենթադրյալ կրած վնասների միջև առկա չէ պատճառահետևանքային կապ²⁰:

Մեկ այլ գործով հայցվորը վնասի հատուցման պահանջ էր ներկայացրել այն հիմքով, որ դատական կարգով անվավեր է ճանաչվել պարտապանի գույքն արգելանքից հանելու՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործողությունը, որից հետո կատարողական վարույթն ավարտվել էր: Հայցվորը նշում էր, որ այդ գործողության հետևանքով իր օգտին կայացված դատական ակտը չի կատարվել, ինչում էլ դրսևորվում է իր կրած վնասը: Դատարանը մերժել էր հայցը հակաիրավական գործողության և վնասի միջև պատճառահետևանքային կապ առկա չլինելու հիմքով: Դատական ակտը պատճառաբանվել է նրանով, որ նախ՝ եթե հայցվորն իր օգտին կայացված դատական ակտի չկատարման արդյունքում կրել է վնաս, ապա այդ վնասը ոչ թե հարկադիր կատարողի ոչ իրավաչափ գործո-

ղության, այլ պարտապանի կողմից դատական ակտը չկատարելու արդյունքն է: Երկրորդ՝ կատարողական վարույթն ավարտելը չի նշանակում պարտապանին դատական ակտի կատարման պարտականությունից ազատում: Կատարողական վարույթն ավարտելու հիմքերի վերացման պարագայում կատարողական թերթը կարող է նորից կատարման ներկայացվել²¹:

Ամբողջ վերոշարադրյալի ամփոփումը ցույց է տալիս, որ պատճառականությունը բավականաչափ բարդ երևույթ է, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պատճառական կապի բացահայտումն իրավակիրառողից պահանջում է գործի բոլոր հանգամանքների համակողմանի վերլուծություն, որպիսի մոտեցումը միայն վերջինիս թույլ կտա հանգելու հիմնավոր եզրակացության ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև օբյեկտիվորեն անհրաժեշտ ուղղակի պատճառական կապի առկայության վերաբերյալ:



²⁰ Տե՛ս <http://ppt.ru/news/60892>, 29.02.2016թ. դրությամբ:

²¹ Տե՛ս <http://ppt.ru/news/60892>, 29.02.2016թ. դրությամբ:

ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Գլոբալացվող արդի հասարակությունում համընդհանուր են դառնում ոչ միայն մարդկային առաջընթացի արդյունքները, այլ նաև մարդկության առջև ծառայած հիմնախնդիրները: Մարդկության առաջընթացն ու բարեկեցությունը հիմնված են տեխնոլոգիայի և մշակույթի բնագավառներում նոր ստեղծագործություններ ստեղծելու՝ մտավոր կարողության վրա, որն էլ պայմանավորում է հեղինակային իրավունքի պահպանմանն ու խախտումների բացահայտման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Հեղինակային իրավունքների գաղափարն առաջ է եկել գրահրատարակչական գյուտի հետ միասին, որը հնարավորություն է տվել մեխանիկական գործընթացների միջոցով բազմացնել գրական երկերը, որոնք մինչ այդ բազմացվում էին ձեռագիր հիմունքներով, որն իր հերթին հասարակության մեջ պայմանավորեց նոր մասնագիտության և գործարար նոր ոլորտի ձևավորումը, որպիսիք էին գրահրատարակչությունը և գրավաճառությունը¹: Այս ոլորտում, բնականաբար, արդեն կատարվում էին լուրջ ներդրումներ՝ ակնկալելով լուրջ շահույթներ: Այստեղ, սակայն, բնագավառի զարգացման մեծ խոչընդոտ էր ձևավորվում: Այս ոլորտում, առանց հեղինակների, գրահրատարակիչների և գրավաճառների համաձայնության շատ հաճախ տեղի էր ունենում երկերի բազմացում և իրացում, որն էլ լրջորեն հարված էր հասցնում համապատասխան անձանց տնտեսական շահերին: Հեղինակները, գրահրատարակիչները և գրավաճառներն սկսեցին հրապարակային կարգով իշխանություններից արտոնություններ պահանջել: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն առաջ եկավ օրենքով պաշտպանել

տպագրությունները և դրանց իրացումը, քանի որ հեղինակային իրավունքն ստեղծագործության հեղինակին այդ աշխատանքի նկատմամբ վերապահում է բացառիկ իրավունք, և այդ ժամանակաշրջանից հետո աշխատանքը դառնում է հանրության սեփականությունը: Հեղինակային իրավունքի համար կարևոր էր ոչ այնքան գործունեության ստեղծագործական բնույթը, որքան արդյունքի նմանօրինակ հատկությունը²:

Արդյունքում 1709 թվականին Անգլիայի թագուհի Աննան ստատուտ (լատիներեն՝ statutum, statuere - որոշել, օրենք, կանոնադրություն) ընդունեց «Կրթությանն աջակցելու և գրքերի օրինակների նկատմամբ հեղինակների և մյուս իրավատերերի սեփականության իրավունքն ամրագրելու մասին³»:

Անգլիայի թագուհի Աննայի ստատուտը պատմության մեջ առաջին իրավական ակտն էր հեղինակային իրավունքների պաշտպանության բնագավառում⁴:

Հետագայում հեղինակային իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրավական ակտեր ընդունվեցին նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և Հայաստանում: 1996 թվականին ընդունվեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը, այնուհետև՝ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, որի 10-րդ բաժինը նվիրված է մտավոր սեփականությանը, իսկ 1999 թվականին ընդունվեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ լրամշակված օրենքը՝ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Այս ոլորտում չափազանց կարևոր է միջազ-

¹ Տե՛ս Дворянкин О. А., “Защита авторских и смежных прав: ответственность за их нарушение”, М., 2002, ст. 34-60.

² Տե՛ս Савелева И. В., “Правовое регулирование в области художественного творчества”, М., 1986, ст. 22.

³ Տե՛ս Հայկյանց Ա., «Միջազգային մասնավոր իրավունք», Երևան, 2010, էջեր 399-400:

⁴ Տե՛ս Судариков С. А., “Основы авторского права”, Минск., 2000, ст. 8.

գային համագործակցությունը: Արդեն 19-րդ դարի սկզբներին շատ երկրներ ունեին հեղինակային իրավունքի մասին իրենց ազգային օրենքները և ժամանակ առ ժամանակ լրացնում կամ փոփոխում էին դրանք՝ ելնելով ժամանակի, տեխնիկայի և գիտության զարգացմանը համապատասխանեցնելու պահանջներից:

Տպագրության հայտնագործությունը վճռական դեր խաղաց հեղինակային իրավունքի ոլորտում: Գրքի տպագրությունն ու տարածումը, լեզուների ուսումնասիրությունն ու իմացությունը, թարգմանությունները և, վերջապես, տարբեր ազգերի մշակութային արժեքների փոխանակումն աստիճանաբար հանգեցրին ստեղծագործության օգտագործման տարածքային սահմանների ու արգելքների վերացմանը:

Կտրուկ ընդարձակվեց հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների համար թե՛ ազգային, թե՛ միջազգային շուկան. երաժշտական, դրամատիկական և արվեստի այլ ստեղծագործություններն անցան մայր երկրի սահմաններն ու սկսեցին ազատ օգտագործվել այլ պետություններում:

Անհրաժեշտ էր պահպանել ոչ միայն ստեղծագործության հեղինակի իրավունքներն իր ստեղծագործության նկատմամբ, այլև կանոնակարգել հեղինակի և ստեղծագործությունն օգտագործողի փոխհարաբերություններն ինչպես իր երկրում, այնպես էլ այն երկրում, որտեղ կարող էր օգտագործվել ստեղծագործությունը:

Ստեղծվեց մի իրավիճակ, երբ տվյալ երկրի օրենքները, որոնք պահպանում էին իրենց տարածքում ստեղծված և միայն իրենց տարածքում օգտագործվող ստեղծագործությունները, անգոր էին պահպանություն ապահովել իրենց սահմաններից դուրս: Այդ օրենքները պահպանություն չէին ապահովում նաև այլ երկրներում ստեղծված, բայց իրենց տարածքներում օգտագործվող ստեղծագործությունների նկատմամբ:

Հեղինակային իրավունքի ահա այս խիստ տարածքային բնույթն էր, որ անհրաժեշտություն առաջացրեց կնքելու այնպիսի երկկողմ պայմանագրեր, որոնք կապահովեին հեղինակային իրավունքի օբյեկտների նկատմամբ փոխադարձ պահպանությունն այն չափով, ինչ

չափով նախատեսված էր իրենց երկրների քաղաքացիների համար: Սակայն, շատ շուտով պարզ դարձավ, որ այս պայմանագրերը նույնպես բավարար պահպանություն չեն կարող ապահովել ազգային օրենսդրությունների՝ իրարից տարբերվող դրույթների պատճառով⁵:

Հարկավոր էր ստեղծել պահպանության մեկ միասնական համակարգ՝ որպես առևտրի արդյունավետության խթան, որը կապահովեր պահպանության նույնանման և ավելի լայն պայմաններ՝ ստեղծագործություններն այլ երկրների տարածքներում օգտագործվելու դեպքում: Եվ ահա, 1886 թվականին 10 պետություններ միավորվեցին ստեղծելով Միություն և Բեռնում ստորագրեցին «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» կոնվենցիա: Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1887 թվականի դեկտեմբերի 5-ին, իսկ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի հոկտեմբերի 19-ից:

Կոնվենցիան հիմնված է 3 հիմնական սկզբունքների վրա և ներառում է մի շարք դրույթներ կոնվենցիայով նախատեսվող պահպանության նվազագույն ժամկետի և իրավունքների վերաբերյալ: Կոնվենցիայի մի անդամ պետության տարածքում ստեղծված ստեղծագործությունները, այսինքն՝ այն ստեղծագործությունները, որոնց հեղինակն այդ անդամ երկրի քաղաքացի է կամ առաջին անգամ դրանք լույս են տեսել այդ երկրում, ենթակա են նույնպիսի պահպանության, ինչպիսին նախատեսվում է այդ անդամ երկրում իր քաղաքացիների համար (ազգային մոտեցում):

Այդ պահպանությունը նախատեսվում է առանց որևէ ձևականության պահպանման (ավտոմատ, ինքնաբերաբար պահպանություն, այսինքն՝ պետական կամ նոտարական կամ այլ գրանցում կամ հեղինակության հաստատագրում չի պահանջվում):

Պահպանությունն ապահովվում է անկախ մայր երկրում պահպանության առկայությունից, սակայն եթե անդամակցող երկիրը նախատեսում է պահպանության ավելի երկար ժամկետ, քան նախատեսված է կոնվենցիայով և մայր երկրում ստեղծագործությունը դադարում է պահպանվելուց, ապա անդամ երկրներ

⁵ Տե՛ս Հայկյանց Ա., «Միջազգային մասնավոր իրավունք», Երևան, 2010, էջեր 401-402:

րում նույնպես այդ հիմքով կարող է պահպանություն չնախատեսվել⁶:

Կոնվենցիայով նախատեսված պահպանությունը տարածվում է հեղինակի և նրա իրավահաջորդների վրա, պահպանվում են հեղինակի թե՛ հրապարակված, թե՛ չհրապարակված ստեղծագործությունները, եթե հեղինակը Կոնվենցիայի անդամ պետության քաղաքացի է կամ մշտական բնակիչ: Եթե հեղինակն անդամ պետության քաղաքացի չէ և չունի մշտական բնակավայր այդ երկրներում, ապա օգտվում է Կոնվենցիայով ապահովվող պահպանությունից այն դեպքում, եթե նրա ստեղծագործությունն առաջին անգամ լույս է ընծայվել անդամ երկրներում կամ միաժամանակ՝ Կոնվենցիայի անդամ պետության և Կոնվենցիային չանդամակցած պետության տարածքում: Ստեղծագործությունների առումով պահպանությունը տարածվում է գրականության, գիտության և արվեստի ոլորտում ցանկացած ստեղծագործության վրա՝ անկախ դրա արտահայտման ձևից կամ միջոցներից:

Բացի հեղինակի գույքային իրավունքներից Կոնվենցիան ապահովում է նաև ոչ գույքային (բարոյական) իրավունքներ: Դրանք են՝ ստեղծագործության հեղինակ ճանաչվելու իրավունքը, ինչպես նաև ստեղծագործության աղճատումը, աղավաղումը, նրա հեղինակությանն ու պատվին վնաս պատճառող այլ փոփոխություններն արգելելու իրավունքը (անձեռնմխելիության իրավունք, այսօր՝ հեղինակի համբավի և արժանապատվության իրավունք): Կոնվենցիան նախատեսում է հեղինակի իրավունքների պահպանության նվազագույն ժամկետ՝ հեղինակի կյանքի տևողությունը և 50 տարի՝ նրա մահից հետո: Այս ժամկետը սահմանվել է հեղինակի ստեղծագործական ոգին խթանելու, ինչպես նաև հեղինակի հաջորդ սերունդների համար բարենպաստ կենսապայմաններ ապահովելու նպատակով: Սակայն անանուն կամ կեղծանունով ստեղծագործությունների դեպքում պահպանության ժամկետը հաշվվում է այդպիսի ստեղծագործության օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալուց հետո: Եթե հեղինակի կեղծանունը կասկած չի հարուցում, այսինքն հայտնի է այն կրող հեղինակի ինք-

նությունը, ապա պահպանությունը հաշվվում է մահից 50 տարի հետո: Համահեղինակությամբ ստեղծված երկերի դեպքում պահպանության հետմահու 50-ամյա ժամկետը հաշվվում է վերջին համահեղինակի մահից հետո:

Հեղինակի բացառիկ իրավունքների հետ մեկտեղ Կոնվենցիան նախատեսում է նաև իրավունքի որոշ սահմանափակումներ, երբ ստեղծագործությունը կարող է օգտագործվել առանց հեղինակի թույլտվության և առանց վարձատրության՝ տեղեկատվության, քաղվածքների, մեջբերումների, ուսուցողական նպատակով մեկնաբանությունների, կարճաժամկետ օգտագործման ձայնագրությունների տեսքով, (այսինքն՝ ազատ օգտագործման դեպքեր, հոդված 10): Կոնվենցիան ունի նաև Լրացուցիչ բաժին, որը նրա անօտարելի մասն է, նախատեսված է զարգացող երկրների համար և հատուկ պայմաններ է նախատեսում թարգմանության և վերարտադրության իրավունքների համար, այսինքն սահմանում է հեղինակի իրավունքների որոշակի սահմանափակումներ նրանց ստեղծագործությունների թարգմանության և վերարտադրության դեպքերում:

Կոնվենցիայի դրույթները չեն խոչընդոտում երկերի ավելի լայն պահպանությանը, որը կարող է նախատեսվել Միության անդամ այս կամ այն երկրի օրենսդրությամբ: Միության անդամ երկրների կառավարություններն իրավասու են կնքել հատուկ համաձայնագրեր, եթե դրանք հեղինակին կապահովեն ավելի լայն իրավունքներ, քան սահմանվում են սույն կոնվենցիայով⁷:

Բեռնի կոնվենցիայում նախատեսված չափանիշները ելակետային են հեղինակային իրավունքների պահպանության ոլորտում:

1952 թվականին Ժնևում ընդունվեց նոր միջազգային պայմանագիր՝ Հեղինակային իրավունքների համաշխարհային կոնվենցիան, որի նախագիծն ավելի քան երեք տարի մշակվում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո:

Ժնևի կոնվենցիան ավելի ունիվերսալ բնույթ ունի, քան Բեռնի կոնվենցիան է, քանի որ Ժնևի կոնվենցիայում նյութա-իրավական նորմերը քիչ են, և ավելի շատ կատարվում են հղումներ անդամ պետությունների ազգային օրենսդրության-

⁶ Տե՛ս Հայկյանց Ա., «Միջազգային մասնավոր իրավունք», Երևան, 2010, էջ 402:

⁷ Տե՛ս «Международное частное право. Курс лекций: учебное пособие для вузов» В. И. Казанцев, М., 2008, ст. 107.

նր: Կոնվենցիան դիտվում էր որպես մինչ այդ ընդունված պայմանագրերի լրացում և որևէ նպատակ չէր հետապնդում փոխարինելու նրանց:

Ժնևի կոնվենցիայի 10-րդ հոդվածն ամրագրում է, որ անդամ պետությունները պետք է կոնվենցիայի դրույթների կիրառումն ապահովելու նպատակով իրենց օրենսդրություններով ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ: Այսինքն, նշված միջազգային պայմանագրերով նախատեսվում են հեղինակային իրավունքների պաշտպանության միայն ընդհանուր դրույթներ:

Ժնևի կոնվենցիային ներկայումս անդամակցում են ավելի քան 90 պետություններ, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետությունը:

Հեղինակային իրավունքների միջազգային պաշտպանությունն իրավական նոր աստիճանի բարձրացվեց 1996 թվականի Ժնևի՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Հեղինակային իրավունքի պայմանագրի ընդունմամբ:

Ժնևի 1996 թվականի պայմանագրով առաջին անգամ նշվում է, որ հեղինակային իրավունքների պաշտպանությունը տարածվում է այնպիսի երկերի վրա, ինչպիսիք են համակարգչային ծրագրերը և տվյալների բազան, մասնավորապես 4-րդ հոդվածում նշվում է, որ համակարգչային ծրագրերը պաշտպանվում են որպես գրական ստեղծագործություններ:

Ժնևի 1996 թվականի պայմանագրին միացել են մի քանի տասնյակ պետություններ, իսկ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 թվականի մարտի 6-ից:

Բեռնի և Ժնևի կոնվենցիաները ներկայումս այն միջազգային իրավական հենասյուներն են, որոնք մեծապես պայմանավորում են օտարերկրյա և հատկապես՝ եվրոպական իրավակարգերում հեղինակային իրավունքների կարգավորման առկա վիճակն ու իրականացվող զարգացումները⁸:

Հեղինակային իրավունքի միջազգային իրավական պաշտպանության ոլորտում էական ձեռքբերում է Մարաքեշի կոնվենցիան, որն ընդունվել է 2013 թվականի հունիսի 27-ին Մարաքեշ քաղաքում: Կոնվենցիայում առկա է մարդասիրության և սոցիալական ասպեկտը, որի

գլխավոր նպատակն է աջակցել կույրերին և տեսողության այլ խնդիրներ ունեցող անձանց մասնակցելու հրատարակված աշխատանքներին, հետևաբար կոնվենցիայի վավերացումը կնպաստի Հայաստանում տեսողության խնդիրներ ունեցող անձանց առավել ակտիվ ներգրավվելու ստեղծագործական աշխատանքներին:

Հեղինակային իրավունքի արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու նպատակով հեղինակային իրավախախտման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է վերլուծել խախտված իրավունքների բնույթը և ընտրել հեղինակային իրավախախտմանը համարժեք պաշտպանության առավել հասցեագրված միջոցներ՝ ներպետական և միջազգային օրենսդրությանը համապատասխան:

Իրավախախտումներից խուսափելու համար անհրաժեշտ է նախևառաջ հասարակությանն իրազեկել այս ոլորտում համապատասխան սուբյեկտների իրավունքների և պարտականությունների, հնարավոր իրավախախտումների և բացասական հետևանքների մասին, քանի որ միայն ճշգրիտ տեղեկատվությունն է հեղինակին իրավունք տալիս ճանաչվելու և պաշտպանված լինելու:

Հեղինակային իրավունքների խախտման նկատմամբ տուժանքների կիրառումը հնարավորություն կտա լուծել այնպիսի խնդիր, ինչպիսին գրագողությունն է, քանի որ միայն պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կիրառմամբ է հնարավոր կանխել հեղինակային իրավունքների խախտումները:

Ներպետական օրենսդրությամբ տրված չէ հեղինակային իրավունքի հասկացությունը, մինչդեռ ցանկացած հիմնախնդրի հիմքում համապատասխան հասկացության սահմանումն է, որը թույլ է տալիս առավել հստակ պատկերացում ունենալ ուսումնասիրվող առարկայի էության վերաբերյալ:

Ներպետական օրենսդրությամբ հեղինակային իրավունքների գրանցումն ամրագրելը, որն իմպերատիվ բնույթ կկրի հեղինակների համար, հնարավորություն կտա ոլորտը դարձնել վերահսկելի, և կապահովագրի հեղինակներին հնարավոր խախտումներից:

⁸ Տե՛ս Մայխասյան Ա. Ա., «Հեղինակային իրավունքի միջազգային իրավունքի նորմերը և ՀՀ օրենսդրությունը», Երևան, 2007, էջեր 121-122, 155:

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար - գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ,
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Աշխատանքը նվիրված է կառավարման ձևի ինստիտուտին, դրա սահմանման հիմքերին ու դասակարգմանը: Դրանում տրված են կառավարման ձևի համառոտ պատմությունը և բովանդակությունը, դրա լայն և նեղ հասկացությունները, դրանց շուրջ գիտնականների կարծիքները: Վերլուծվել են կառավարման հանրապետական ձևի տարբեր տեսակները (համակարգերը), ուղղակի կամ անուղղակի ընտրությունների միջոցով ընտրված նախագահի լիազորությունները:

Բանալի բառեր. կառավարման ձև, կառավարման համակարգեր, հանրապետական ձև, միապետություն, կառավարության ձևավորում, գործադիր իշխանություն, օրենսդիր իշխանություն, պետության ղեկավար

ГРАЙР ТОВМАСЯН

Руководитель - генеральный секретарь
аппарата НС РА, кандидат юридических наук

**НЕОБХОДИМОСТЬ ИЗУЧЕНИЯ ИНСТИТУТА ФОРМЫ
ПРАВЛЕНИЯ, ОСНОВЫ ОПРЕДЕЛЕНИЯ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ**

Работа посвящена институту формы правления, основам ее определения и классификации. В ней даны краткая история и содержание формы правления, ее узкое и широкое понятие, мнения ученых о них. Анализированы разные виды (системы) республиканской формы правления, полномочия президента, избираемого путем прямых или косвенных выборов.

Ключевые слова: форма правления, системы правления, республиканская форма, монархия, оформление правительства, исполнительная власть, законодательная власть, правитель государства

HRAYR TOVMASYAN

Chief of the Staff - Secretary General
of the National Assembly of RA, PhD in Laws

**THE NECESSITY OF STUDYING THE INSTITUTE OF FORMS OF
GOVERNMENT, FUNDAMENTALS OF DEFINING THE FORMS OF GOVERNMENT**

The paper deals with the institute of forms of government, the fundamentals of its definition and classification. It comprises the summarized history and content of the forms of government, its broad and narrow definition, opinions of the scientists on them. Different types (systems) of republican form of government, the authorities of the president elected by direct or indirect elections are analyzed.

Keywords: form of government, systems of government, republican form of government, monarchy, formation of government, executive power, legislative power, head of the state

ՍՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արցախի Պետական Համալսարանի
«Իրավունք» ամբիոնի դասախոս

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

ՀՀ և ԼՂՀ իրավական համակարգերում գոյություն չունեն իրավունքի հատուկ ճյուղեր կամ ենթաճյուղեր, որոնք կարգավորում են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների սահմանափակման հարցերը: Սակայն հայկական իրավական համակարգի տարբեր ճյուղերում, ներառյալ՝ սահմանադրական, վարչական, աշխատանքային, քաղաքացիական, միջազգային մասնավոր իրավունքում, քրեաիրավական, կան այդպիսի սահմանափակումները կարգավորող տարբեր նորմեր:

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցը գլխավորապես դրված է Սահմանադրության վրա, որն իր հեղինակությամբ պետք է հստակորեն սահմանի սահմանափակման շրջանակները, չթույլատրի անհամաչափ սահմանափակումներ ու լայնակի մեկնաբանություններ:

Բանալի բաներ. սահմանադրություն, իրավունքների սահմանափակում, սահմանափակման չենթակա իրավունքներ, արտակարգ դրություն, ռազմական դրություն

СОСИ АЛЕКСАНИЯ

Лектор кафедры права
Арцахского Государственного Университета

ОСНОВЫ И ПОРЯДОК ОГРАНИЧЕНИЯ КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА

В правовой системе НКР и РА не существуют конкретных отраслей права, которые регулируют ограничение конституционных прав и свобод человека и гражданина. Тем не менее в разных областях армянской правовой системы, включая конституционном, административном, трудовом, гражданском, уголовном праве существуют различные нормы, регулирующие такие ограничения. Вопрос ограничения конституционных прав и свобод человека и гражданина, в основном, возложен на конституционное право, которое должно четко установить рамки ограничения, не допуская непропорциональное ограничение и двусмысленное толкование.

Ключевые слова: конституция, ограничение прав, права не подлежащее ограничению, чрезвычайное положение, военное положение

SOSY ALEKSANYAN

Lecturer at Law Faculty of Artsakh
State University

FOUNDATIONS AND THE ORDER OF RESTRICTION OF THE CONSTITUTIONAL RIGHTS AND FREEDOM OF A PERSON AND A CITIZEN

In the legal systems of NKR and RA there do not exist specific branches or sub-branches of laws which regulate restriction of constitutional rights and freedom of a person and a citizen. Nevertheless there are different norms in different areas of armenian legal system, including constitutional law, administrative law, labour law, civil law, private international law, criminal law, regulating such restrictions. The issue of restriction of constitutional rights and freedom of a person and a citizen mainly rests on constitutional law which should accurately establish the frameworks of restriction, prohibit disproportionate restriction and ambiguous interpretation.

Keywords: constitution, restriction of the rights, rights not subject to restriction, state of emergency, martial law

ՍԱՄՎԵԼ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ, Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող

ԶԻՆՏԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄՈԼԵԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Գիտական հոդվածի շրջանակներում հեղինակներն անդրադարձել են զինծառայողի կողմից մոլեխաղեր կազմակերպելու կամ դրանց մասնակցելու հանցակազմի քրեաիրավական բնութագրի որոշ հիմնախնդիրների, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում «մոլեխաղ»-ի և «գրազ»-ի հասկացությունների բացակայության հետևանքով գործնականում արարքի քրեաիրավական որակման հետ կապված խնդիրներին: Գիտական աշխատանքում փորձ է կատարվել սահմանել «մոլեխաղ» և «գրազ» եզրույթները և առանձնացվել են դրանց հիմնական հատկանիշները:

Հեղինակների կողմից ուսումնասիրվել են արտասահմանյան երկրների փորձը, օրենսդրական ակտերը, ընդհանուր իրավասության առաջին առյուծի դատարանի դատական ակտերը և տեսաբան-գիտնականների կարծիքները:

Անդրադարձ է կատարվել նաև մոլեխաղի ու գրազի տարբերակման հիմնախնդիրին, ինչպես նաև գրազի ու խարդախության հանցակազմերի տարանջատմանը:

Բանալի բառեր. մոլեխաղ, գրազ, զինվորական ծառայության կարգ

САМВЕЛ ЮЗБАШЯН

Прокурор военной прокуратуры Ереванского гарнизона, Преподаватель кафедры права Французского университета в Армении, кандидат юридических наук

ГЕВОРГ ХАЧАТРЯН

Студент юридического факультета Французского университета в Армении

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ПРАВОВОЙ ХАРАКТЕРИСТИКИ ОРГАНИЗАЦИИ АЗАРТНЫХ ИГР ИЛИ УЧАСТИИ В НИХ ВОЕННОСЛУЖАЩИМ

В рамках научной статьи авторы обращаются к некоторым проблемам уголовно-правовой характеристики состава организации азартных игр или участия в них военнослужащих, в частности, к проблемам, связанным с уголовно-правовой квалификацией деяния, вследствие отсутствия понятий «азартная игра» и «пари» в Уголовном кодексе РА. В научной работе сделана попытка определить термины «азартная игра» и «пари», и выделить их основные характеристики.

Авторами изучен опыт зарубежных стран, законодательные акты, судебные акты судов общей юрисдикции первой инстанции и мнения ученых-теоретиков.

Была также рассмотрена проблема дифференцирования азартной игры и пари, и дифференциация состава мошенничества и пари.

Ключевые слова: азартная игра, пари, порядок военной службы

SAMVEL YUZBASHYAN

Prosecutor at the Office of Military Prosecutor of Yerevan Garrison, Lecturer at French University in Armenia, Ph.D. in Laws

GEVORG KHACHARTYAN

Student of the faculty of law at French University in Armenia

SOME PROBLEMS OF CRIMINAL LEGAL CHARACTERISTICS OF ORGANIZATING OR PARTICIPATING IN GAMBLING BY A SERVICEMAN

In the frame of the scientific paper the authors address some problems of criminal legal characteristics of organizing or participating in gambling by servicemen. Particularly, they touch the issues related to the

criminal legal qualification of the act arising from the absence of the notions “gambling” and “betting” in the Criminal Code of the Republic of Armenia.

This article attempts to define the notions “gambling” and “betting” and highlights their main features.

The authors have studied international experience, laws, judicial acts of the general jurisdiction court of the first instance and the opinions of scientist-theorists.

It has been referred to the problem of differentiation of gambling and betting, as well as the distinction between fraud and betting is also considered.

Keywords: gambling, betting, order of military service

* * *

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ավագ քննիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԴԻԱՎԱՅԻՆ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ

Հոդվածում վերլուծվում են դիակային դոնորից օրգանների ստացման հիմնախնդիրները, ուսումնասիրվում է համաձայնության կանխավարկածի հիմնավորվածությունը, նշվում է մարդու օրգանների անօրինական շրջանառության կանխարգելման նպատակով նոր հանցակազմերի նախատեսման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. դոնորություն, մարմին, համաձայնություն, կանխավարկած, հյուսվածք, փոխպատվաստում

ЛУСИНЕ ВАРДАНЯН

Старший следователь по особо важным
делам Следственного Комитета РА,
кандидат юридических наук

АКТУАЛЬНЫЕ ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПОСТМОРТАЛЬНОГО ДОНОРСТВА

В статье анализируются правовые проблемы постмортального донорства. Рассматривается вопрос целесообразности презумпции согласия. Предлагается установление уголовной ответственности за ряд общественно опасных деяний с целью превенции незаконного оборота органов и тканей человека.

Ключевые слова: донорство, тело, согласие, презумпция, ткань, трансплантация

LUSINE VARDANIAN

Chief Investigator for Especially Important Cases of the
Investigative Committee of the Republic of Armenia,
PhD in Laws

ACTUAL LEGAL PROBLEMS OF POST-MORTEM ORGAN DONATION

This paper presents a study about the problems of post-mortem organ donation. The justification of the presumption of agreement on the post-mortem donation has been considered. The necessity of articulating new crimes aimed at preventing illicit circulation of human organs is noted.

Keywords: donation, body, agreement, presumption, tissue, transplantation

ՀԱՅԿ ԵՐԵՄՅԱՆ

Իրավագիտության մագիստրոս

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ
(ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Սույն հոդվածը նվիրված է քրեական դատավարությունում ապացույցների դասակարգման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում առկա տարբերությունների ներկայացմանը: Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ ապացույցների դասակարգման նշանակությունը և դրա խախտման դեպքում առաջ եկող խնդիրները: Հեղինակը, ներկայացնելով Գերմանիայում առկա դրական փորձը, առաջարկություններ է ներկայացնում ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի և նոր օրենսգրքի նախագծի կարգավորումների բարելավման վերաբերյալ:

Բանալի բառեր. անձնական և իրեղեն ապացույցներ, ապացույցների անմիջական հավաքման (հետազոտման) սկզբունք, դատախազը և պաշտպանը որպես վկաներ, համամեղադրյալ, զննելի ապացույց, տեսագրությունը, ձայնագրությունը և լուսանկարը որպես զննելի ապացույցներ

ГАЙК ЕРЕМЯН

Магистр правоведение

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КЛАССИФИКАЦИИ ДОКАЗАТЕЛЬСТВ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ
(сравнительно-правовой анализ)**

Данная статья посвящена представлению отличий, существующих в законодательной и правоприменительной практике Республики Армения и Федеративной Республики Германии, в сфере классификации доказательств в уголовном процессе. Цель исследования: показать значение классификации доказательств, и возникающие проблемы при неправильной классификации доказательств. Представляя положительный опыт Германии, автор вносит предложения, направленные на улучшение регулирований действующего уголовно-процессуального кодекса и проекта нового уголовно-процессуального кодекса Республики Армения.

Ключевые слова: личные и вещественные доказательства, принцип непосредственного сбора и обследования доказательств, прокурор и защитник, как свидетели, обвиняемый, исследуемое доказательство, видеозапись, звукозапись и фотография, как исследуемые доказательства

HAYK YEREMYAN

LL.M

**SOME ISSUES ON CLASSIFICATION OF EVIDENCE IN THE CRIMINAL PROCEDURE
(comparative-legal analysis)**

This article is devoted to the presentation of differences between the legislative and legal practices of the Republic of Armenia and the Federal Republic of Germany related to the classification of evidence in criminal procedure. The purpose of this study is to show the meaning of the classification of evidence and the issues arising from the incorrect classification of evidence. By presenting Germany's best practice, the author makes suggestions seeking the improvement of regulations of the Criminal Procedure Code, currently in force, and the draft new Criminal Procedure Code of the Republic of Armenia.

Keywords: personal and material evidence, the principle of direct collection and examination of evidence, the prosecutor and the defender (legal counsel) as witnesses, co-defendant, observable evidence, video recording, sound recording, and a photograph as observable evidence

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ԴԱՏԱԽԱՋԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԴԱՏԱԽԱՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ) ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Աշխատանքում հեղինակը, նախևառաջ, անդրադարձել է դատախազական հսկողության՝ որպես սահմանադրական գործառույթի ու պարտականության էությանն ու խնդիրներին:

Գիտական հոդվածի շրջանակներում քննարկվում է դատախազի՝ քննչական գործողություններին մասնակցելու լիազորության հիմնախնդիրը դատախազական հսկողության համատեքստում: Աշխատանքում բացահայտվում է դատախազի այս լիազորության կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ ներկայացնելով տեսական և գործնական հիմնավորումներ: Վերլուծության արդյունքում հեղինակը հանգում է այն հետևության, որ գործող օրենսդրությամբ հսկող դատախազին քննչական գործողություններին մասնակցելու լիազորություն չվերապահելը ծայրահեղ քայլ է և գործնականում առաջացնում է խնդիրներ:

Հեղինակը գտնում է, որ դատախազի մասնակցությունը քննչական գործողություններին ապահովում է ապացույցների թույլատրելիությունը, դատախազական հսկողության արդյունավետությունը, հետևաբար, էապես բարձրացնում է նախաքննության որակը: Հեղինակն առաջարկում է, որպեսզի նոր քրեական դատավարության օրենսգրքով հսկող դատախազին իրավունք վերապահվի ոչ միայն մասնակցելու մեղադրյալի հարցաքննությանը, այլև դեպքի վայրի զննությանը՝ բերելով տեսական և գործնական հիմնավորումներ, իրավակիրառ պրակտիկայում հանդիպած դեպքերի օրինակներ:

Հեղինակի կողմից ուսումնասիրվել են Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներ, միջազգային իրավական ակտեր, տեսաբան-գիտնականների կարծիքներ, այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքեր և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումները:

Բանալի բառեր. դատախազական հսկողություն, քննչական գործողություններ, մինչդատական վարույթ, հսկող դատախազ

ГЕВОРГ ХАЧАТРЯН

Студент юридического факультета
Французского университета в Армении

**УЧАСТИЕ ПРОКУРОРА В СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЯХ В
КОНТЕКСТЕ ПРОКУРОРСКОГО НАДЗОРА (ФУНКЦИИ)**

В работе автор, в первую очередь, обратился к сущности и задачам ответственности прокурорского надзора - как Конституционной функции.

В рамках научной статьи обсуждается основополагающая задача полномочий участия в следственных действиях прокурора, в контексте прокурорского надзора.

В работе выявляется важность и необходимость данного полномочия прокурора, представив теоретические и практические обоснования. В результате анализа автор приходит к такому выводу, что по действующему законодательству непредоставление полномочий надзирающему прокурору, в участии следственных действиях, является крайним шагом и на практике приводит к проблемам.

Автор считает, что участие прокурора в следственных действиях обеспечивает приемлемость доказательств, эффективность прокурорского надзора, следовательно, существенно поднимает качество предварительного расследования.

Автор предлагает, чтобы надзирающему прокурору, по новому уголовно-процессуальному кодексу, было предоставлено право не только участвовать на допросе обвиняемого, но также и в осмотре места происшествия, дает теоретические и практические обоснования, примеры случаев из юридической практики.

Автором исследованы правовые положения Конституционного суда, международные правовые

акты, мнения ученых-теоретиков, уголовно-процессуальные кодексы других стран и правовое упорядочивание проекта нового уголовно-процессуального кодекса РА.

Ключевые слова: прокурорский надзор, следственные действия, досудебное производство, надзирающий прокурор

GEVORG KHACHATRYAN

Student at Faculty of Law at
French University in Armenia

PARTICIPATION OF PROSECUTOR IN THE INVESTIGATIVE ACTS IN THE CONTEXT OF THE FUNCTION OF PROSECUTORIAL SUPERVISION

In the instant work the author, first of all, speaks about the essence and problems of prosecutorial supervision as a constitutional function and a duty.

In the article the author also discusses the issue of participation of prosecutor in the investigative acts in the context of prosecutorial supervision. The importance and the necessity of this power of prosecutor are revealed and theoretical and practical justifications are presented. As a result of analysis and research the author comes to a conclusion that not entitling the prosecutor with the power to participate in the investigative acts is an ultimate step and can lead to various practical problems.

The author considers that the participation of prosecutor in the investigative acts assures the admissibility of evidence and the efficiency of prosecutorial supervision. Therefore, it will raise the quality of the pre-trial proceedings.

The author suggests that the new Criminal Procedure Code entitles the supervising prosecutor with the right not only to participate in the interrogation of the accused, but also in the examination of the scene of the crime, and provides theoretical and practical reasoning and brings examples of cases from legal practice.

The author explores the legal position of the Constitutional Court, international legal acts, opinions of scientists-theorists, criminal procedure codes of other countries, and the legal regulations of the new draft Criminal Procedure Code.

Keywords: prosecutorial supervision, investigative acts, pre-trial proceedings, supervising prosecutor

ՊԱՐԳԵՎ ՍԱՐՈՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
«Սահմանադրական իրավունք» ամբիոնի ասպիրանտ

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի էության ճիշտ ըմբռնման համար անչափ կարևոր է պարզաբանել, թե որն է վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքը, և ինչպիսի պայմանների առկայության դեպքում է վրա հասնում այդ պատասխանատվությունը: Նշված խնդրի քննարկումը նաև թույլ կտա հստակորեն սահմանազատելու վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը քաղաքացիաիրավական պատասխանատվությունից, ինչը գործնական մեծ կարևորություն ունի և անհրաժեշտ է պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ հրապարակած ակտերի հետևանքով անձանց խախտված իրավունքների վերականգնման նպատակով:

Բանալի բառեր. վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն, քաղաքացիաիրավական պատասխանատվություն, վնաս, մեղք, հակաիրավականություն, պատճառահետևանքային կապ, իրավաչափության կանխավարկած, գլխավոր դելիկտ

ПАРГЕВ САРОЯН

Аспирант кафедры конституционного
права юридического факультета Ереванского
государственного университета

**ОСНОВАНИЕ И УСЛОВИЯ ВОЗНИКНОВЕНИЯ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА УЩЕРБ,
ПРИЧИНЕННЫЙ АДМИНИСТРИРОВАНИЕМ**

Для правильного понимания сущности института возмещения ущерба, причиненного административанием чрезвычайно важно разъяснить, что является основанием для возникновения ответственности за ущерб, причиненный административанием и при наличии каких условий наступает эта ответственность. Обсуждение указанной проблемы также позволит четко разграничить ответственность за ущерб, причиненный административанием от гражданско-правовой ответственности, что имеет большое практическое значение и необходимо для восстановления прав лиц, нарушенных в результате действий, бездействий или принятия актов государственными органами и их должностными лицами.

Ключевые слова: ответственность за ущерб, причиненный административанием, гражданско-правовая ответственность, ущерб, вина, неправомерность, причинно-следственная связь, презумпция правомерности, основной деликт

PARGEV SAROYAN

PhD student of the Chair of Constitutional Law
at the Faculty of Law of Yerevan State University

**GROUND AND CONDITIONS OF LIABILITY FOR DAMAGE
CAUSED THROUGH ADMINISTRATON**

In order to properly understand the essence of the institute of compensation for damage caused through administration it is of utmost importance to clarify what the grounds of liability for the damage caused through administration are, and upon which circumstances it is imposed. The discussion of the mentioned question will also allow to clearly demarcate the liability for the damage caused through administration as opposed to civil one, which practically has a great importance and is necessary for restoration of the rights of individuals violated as a result of actions, omissions or published acts of state bodies and their officials.

Keywords: liability for damage caused through administration; civil liability; damage; guilt, unlawfulness; causal connection; presumption of legality, main delict

ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածը նվիրված է հեղինակային իրավունքի միջազգային իրավական պաշտպանությանը: Հոդվածում ուսումնասիրվել է հեղինակային իրավունքի ինստիտուտի ձևավորման պատմաիրավական նախադրյալները, ինչպես նաև հեղինակային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա ներպետական և միջազգային իրավական կարգավորումները:

Բանալի բառեր. մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք, գրագողություն, Բեռնի կոնվենցիա, Ժնևի կոնվենցիա

КАРИНЕ ПЕТРОСЯН

Помощник заместителя генерального прокурора РА

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВАЯ ЗАЩИТА АВТОРСКИХ ПРАВ

Данная статья посвящена международно-правовой защите авторских прав. В статье изучены историко-юридические предпосылки формирования института по защите авторских прав, а также регулирование внутрегосударственных и международных юридических вопросов по защите авторских прав.

Ключевые слова: интеллектуальная собственность, авторское право, плагиат, Бернская конвенция, Женевская конвенция

KARINE PETROSYAN

Assistant to the Deputy Prosecutor General of RA

INTERNATIONAL LEGAL PROTECTION OF COPY-RIGHT

The article discusses the international legal protection of copy-right. The historical prerequisites of formation of the copy-right institute are examined, as well as the national and international legal regulations on the protection of copy-right are analyzed.

Keywords: intellectual property; copy-right; plagiarism; Bern convention; Geneva convention

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՉՎՈՂ ՂԱՀԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է կրեն գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերվի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝ ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարահարանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ միասին պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի այն տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4/201x297 մմ/ չափի և ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, աջից՝ 10մմ, վերևից՝ 20մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրել 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվի ինտերնետային հասցեն, և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և հնարավոր է չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: